ԸՆԹԱՑՔ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՆԱԽԱԴՐՈՒՆՔ

ԱՑ-ԳՐԱԲԱՌ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հ 174982

ՆԱԽԱԴՐՈՒՆՔ

ՀԱՅ-ԳՐԱԲԱՌ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

491.99-53
թ

ԿԱՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՄԱՅԱՆՑ ԲԱՆԻ

ՊԱՐԶ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՃՈՎ

ԳՐԵԱՑ

Հ. ԹԱԴԷՈՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՑ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1892

ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ դպրոցաց մէջ աշխարհիկ կամ նոր լեզուի ուսումն անհրաժեշտ համարուած է այսօր, եւ այդ ուսումը դիւրացնելու համար արդէն հրատարակուած են այլ եւ այլ ընտիր քերականութիւններ։

Մեր այս ամենահամառօտ գրուածքին նպատակն է նորագոյն գործի մ'ընծայել դաստիարակաց եւ նորուս համբակաց ձեռքը, եւ անով քերականական նախնի ծանօթութեանց հետ՝ օգտակար եւ զուարճալի հրահանգներով ընդելացընել նաեւ գրաբառ լեզուին։ Այս նպատակաւ պատրաստած ենք Ա--ՋԻՆ ԹԵՐԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ կոչուած գործնական երկասիրութիւն մ'ալ, զոր կը յուսանք անմիջապէս հրատարակել տպագրութեամբ։

Ինչպէս ամէն դասական գրութիւնք՝ 'ի հարկէ մեր այս համառօտ քերականութեան ընթացքն եւս իրենց մասնաւոր ուղղութիւնն ու ծրագիրն ունին, ոչ եթէ կանոնաց նկատմամբ՝ որ անփոփոխ են միշտ, այլ զանոնք աւանդելու մասին։ Փորձով համոզուած ենք որ առանց գործնական հրահանգաց՝ ամենէն հմտայից դասագրեանք անգամ գրեթէ վախճանազուրկ են։ Վասն զի

'ի սկզբան դեռահասակ տղայոց միտքն ու սիրտը կըրթական օրինակներով շատ աւելի կը ձգուին՝ քան ցամաք կանոններու երկայն բարակ պատճառաբանութեամբ։

Բայց գործնական եւ այսօրինակ ուղղութիւն ունեցող գրաբառ լեզուի տարրական դասագիրք մը ոչ սակաւ դժուարութիւններ կ'ենթադրէ, ինչպէս հմտագոյն փորձաւորաց յայտ է. ասոր համար որչափ կատարեալ յաջողութիւն յուսալէն առ այժմ հեռի ենք, միւս կողմանէ բարի ձեռնարկութիւն մը թերութեամբքն հանդերձ՝ այլոց օգտակար եւ մեզի պարտք կը համարինք։

Զմոռնանք ըսելու որ մեր նպատակը միայն զուտ գրաբառն ըլլալով՝ այսօրուան աշխարհաբառի պահանջներուն 'ի հարկէ միտ դրած չենք, հաստատուն գիտնալով որ տղայական փափուկ հասակին յաճախ մեծ դիւրութիւն եւ շահեկանութիւն կ'ընծայէ ինչ որ կատարելոց համար թերութիւն միայն կը նկատուի։

Կը փափաքինք որ դպրոցաց մէջ սիրալիր ընդունելութիւն գտնելով մեր այս դուզնաքեայ աշխատութիւնք, իրենց վախճանին հասնին՝ ծառայելով մեր հին լեզուին ուսման դիւրութեան եւ յառաջադիմութեան։

Աւելորդ կը համարինք հոս մեր քերականական կարծեցեալ փոփոխութեանց եւ ուրեք ուրեք անճիշդ բացատրութեանց պատճառները տալ. կը յուսանք որ ողջամիտ քննադատք արդարացընեն զմեզ, տեսնելով որ հեղինակութեան ամէն ձիրք զոհած ենք 'ի սէր պարզաբանութեան, կարգաւորութեան եւ համառօտութեան, որովք միայն կարելի էր մեր նպատակին հասնիլ։



Հ 29. 113 3

Մեսրոպ 'ի տեսլեան մաղթանօքն ամբիծ
Զուլէ ծիզ, մանկունք, տառս ասուածագիծ,
Զ' ի բառս և յիմաստ Նախնեաց ծարաւիք՝
Մի' և զԴրոց լիզուաւն անփոյթ առնիջիք։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

Այբուբեն

1. Մեր լեզուին մէջ երեսուն և ութ գիր կայ և սոնք են.

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, օ, ֆ։

2. Գրերն երկու տեսակ են. Ձայնաւոր և Բաղաձայն։

3. Ձայնաւոր կ'ըսուին այն գրերն որ միանակ կրնան հնչուիլ, և են. ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ։

4. Մնացած գրերը Բաղաձայն կ'ըսուին, վասն զի միանակ չեն հնչուիր այլ ձայնաւոր գիր կ'ուզեն։

5. Երկու կամ աւելի քովէ քով եկած բաղաձայններուն մէջ ը ձայնաւորը կը հնչուի՝ բայց չի գրուիր։ Օրինակ. խնտալ, տղայ, փրկիչ բառերը պէտք է այսպէս կարդալ՝ խընտալ տըղայ, փըրկիչ։

Ծանօթութիւն. — ֆ գրաբառի մէջ չի գործածուիր. են ալ է եւ միացած։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Աշակերտք կարդան եւ օրինակեն վարի պատմութիւնն, եւ ուր որ ը ձայնաւորը պիտի հնչուի՝ զատեն բաղաձայներն ուղղահայեաց գծիկով (|)։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մեր լեզուին մէջ քանի՞ գիր կայ և որո՞նք են — 2. Քանի՞ տեսակ են գրերն — 3. Ձայնաւորներն որո՞նք են և ինչո՞ւ այսպէս կ'ըսուին — 4. Մնացածներն ինչո՞ւ բաղաձայն կ'ըսուին — 5. Երկու կամ աւելի քովէ քով եկած բաղաձայններ ինչպէս պէտք է կարդալ ու գրել։

Հիւանդ տղան

Խեղճ տղայ մը կար հիւանդ. իր որբոցին մէջ պառկած էր և շատ կը նեղուէր։ Մայրը քովն էր, շատ տրտում և արցունքն աչուքները։ Ատեն ատեն ոտք կ'ելնէր, իր որդւոյն կը մօտենար, և անոր պզտիկ գլուխը վեր վերցնելով խմելու բան կու տար։ Հայրը վհատած էր. գործ չէր կրնար գործել. սիրտը լքած էր։ Խցին մէջ եղբարքն ու քոյրերը լուռ կը կենային, վախնալով որ չըլլայ թէ խօսքով կամ աղմկով մը իրենց կրսեր եղբօրը քունը վրդովեն։ Հանգչէ խեղճ տղայ, մայրդ քովդ է, հայրդ վրադ կը հսկէ, եղբարքդ ու քոյրերդ քեզի համար աղօթք կ'ընեն։ Աստուած բարի ընտանիքը կը պաշտպանէ։ Քիչ մը ետքը տղան սկսաւ աղէկնալ. իր գլխիկն որբոցէն վեր վերցուց. տեսաւ որ մայրը կը ժպտէր. տեսաւ որ եղբարքն ու քոյրերը զուարթ էին. երջանկութիւնը նորէն տուն դարձաւ. իսկ հայրը շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ՝ որ իր որդին վերատին իրեն կը շնորհէ։ Ո՜հ, ինչ քաղցր բան է բարի ընտանիք ունենալը։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց *

Աղ-էս Ի-ղ-ղ

Աղուէս սովալլուկ տեսեալ զողկոյզ խաղողոյ 'ի բարձր այգւոջ, խնդրէր զայն ընդոստ 'ի վեր վազելով՝ և 'ի չկարելն հպել, ասէ. « Դեռ ևս տհաս է »։

— Որք միանգամ արհամարհեն յոր ոչն իցեն ձեռնհաս, ընկալցին զառակս զայս 'ի խրատ անձանց։

Թարգմանութիւն

Աղ-էն -- Ի-ղ-ղը

Սատիկ անօթեցած աղուէս մը բարձր որթի վրայ խաղողի ողկոյզ մը տեսնելով՝ վեր վեր ցատքելով կ'ուզէր զայն (փրցնել)՝ բայց չկրնալով հասնիլ՝ մէկդի գընաց ըսելով. « Դեռ խակ է »։

— Որոնք որ բանի տեղ չեն դներ ինչ որ չեն կրնար, թող իրենց խրատի տեղ առնեն այս առակս։

---

* Մենք այս և հետեւեալ հատուածոց դիմաց աշխարհա-

ԵՐԿՐՈՐԴ ԱՍ

Վանկ, Բառ և Խօսք

6. *Զայնաւոր ու բաղաձայն գրերով եւած մէկ հնչումը* Վանկ *կ'ըսուի։*

Օրինակ։ Գո—վե—լի է մա—նուշկ աշ—խա—տա—սէր։

7. *Մէկ կամ աւելի վանկեր քովէ քով գալով կը ձեւացընեն* Բառը։ *Գոռ, մանուշկ, աշխատասէր մէկմէկ բառեր են. գոռ մէկ վանկ ունի, մանուշկ երկու վանկ ունի, աշխատասէր՝ չորս վանկ։*

8. *Բառերը քովէ քով կը գրուին ու միտք մը կուտան, այս է* Խօսքը *կամ* Բանը։

Գովելի է մանուշկ աշխատասէր, չորս բառերէ ձեւացած խօսք մ'է։

9. *Բառերն ուիթը տեսակ են.* Անուն, Դերանուն, Բայ, Դերբայ, Նախդիր, Մակբայ, Շաղկապ, Զայնարկութիւն։

10. *Անոնք* Մասունք բանի *կ'ըսուին, որ ըսել է խօսքին մասերը։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ։ — 6. *Ի՞նչ է* ՎԱՆԿՆ — 7. ԲԱՌՆ *ինչպէս կը ձեւանայ* — 8. ԽՕՍՔ *կամ* ԲԱՆ *ըսելով ինչ կ'իմացուի* — 9. *Քանի՞ տեսակ են բառերն* — 10. *Ի՞նչ անուն ունին բառերուն այս տեսակներն։*

բառ թարգմանութիւն մը միայն գրինք՝ գասագրքոյկս չծանրաբեռնելու նպատակաւ։ — Կը փութանք իմաց տալ յարգոյ ուսուցչաց որ աշակերտաց միտքը գրաբառին ընտելացընելու համար մեր գրած թարգմանութիւններով գոհ չըլլան, այլ անհրաժեշտ բերանացի կամ գրաւոր կրթութիւններ ընել տան, ինչպէս են՝ Հատուածն 'ի բերան ուսանել, Բառերը սովրիլ, Գրքերը գոցած՝ վարժապետին ըսելովը գրել սև տախտակին վրայ՝ ուղղագրութեան համար, Դաս առ դաս յառաջադիմութենաց հաստատ՝ քերականական յուժմունք ընել, եայլն։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա — · Այն բառերու վանկերը գտնել ուղղահայեաց գծիկով։

Գատարկ, չարասէր, մուկն, արեգակն, ազնիւ, ուրախութիւն, մարդարէ, կորստական, փառք, շնորհապարտ, առաքինաջան, երդմնազանց, կոյր, երկնային, աքանչելահրաշ։

Բ — · Նշանակել թէ այս խօսքերը քանի՞ բառերէ կազմուած են։

Տեսրակն ապիտակ է։ Արեգակն լուսաւոր է։ Ժամանակը կ'անցնի։ Դու դասդ չսորվեցար։ Քունն օգտակար է մարդուս։ Առաքինի տղան սիրելի է Աստուծոյ և իր ծնողաց։ Ցոյլ աշակերտն անպտուղ ծառերու նման է։ Գործ մը սկսելէդ առաջ վրան մտածէ։ Աւելի լաւ է մէկուն աչքն երնէ քան թէ անունն։ Տղաք, ժամանակն յարգեցէք։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Կնոջ երգը

Կնատակք երկու ի բացի գոմն փղոսկր, և այր յընկերէն ճգնէր բռնցի կորզել զայն։ Սակայն յաղթողն կորոյս և զխուն զիսակն զոր ունէր։ Եւ ահա սանտր էր մրցանակ պայքարին։

Թարգմանութիւն

Երգու կոնտ

Երկու կունտ (մարդիկ) բաց տեղ փղոսկր մը գտան, և մէկը միւսէն բռնցիով կը ջանար զայն յափշտակել։ Բայց յաղթողը ունեցած քիչ մը մազն ալ կորսընցուց։ Եւ ահա կռուոյն մրցանակը սանտր մ'էր։

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Կետադրութիւն

11. Գրութեան մէջ խօսքերն իրարմէ զատելու համար մէկ քանի նշաններ կան, որ կէտ կ՚ըսուին։

12. Գլխաւոր կէտերն սոսնք են. Բութ (՝), Ստորակէտ (,), Միջակէտ (.), Վերջակէտ (:), Շեշտ (՛), Պարոյկ (՞), Երկար (՛), Փակագիծ (( )), Գրադարձ (-)։

13. Բութը կը դրուի բառի մը վերջին գրին վրայ՝ շունչ առնելու և յաջորդէն զատելու համար։

14. Ստորակէտը խօսքին անկատար մասերուն ծայրը կը դրուի։

15. Միջակէտը կը դրուի խօսքի մը ծայրն՝ որ լրանալու համար դեռ ուրիշ մաս մ՚ալ կ՚ուզէ։

16. Բոլորովին լմընցած խօսքին առջև կը դրուի վերջակէտն, և հետևեալ բառը մեծ գրով կամ գլխագրով կը սկսի։

17. Շեշտը զարնելու նշան է, պարոյկն՝ հարցընելու, և երկարը՝ ձայնը երկընցընելու։

18. Փակագիծն օտար բառեր կամ խօսքեր գրութեան մը բուն իմաստէն զատելու կը ծառայէ։

19. Գրադարձը տողերուն ծայրը կը դրուի՝ երբ բառի մը կէսն յաջորդ տողին անցընենք։

ՀԱՐՑՄՈՒՆՔ.– 11. *Կէտերն ինչ են* – 12. *Գլխաւոր կէտերն որոնք են* – 13. *Բութն ուր կը դրուի* – 14. *Ստորակէտը* – 15. *Միջակէտը* – 16. *Վերջակէտը* – 17. *Ի՞նչ նշաններ են Շեշտը, Պարոյկն ու Երկարը* – 18. *Փակագիծն ինչ բանի համար կը գործածուի* – 19. *Գրադարձն ուր կը դրուի և ինչո՞ւ համար։*

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Հետեւեալ խօսքերն իրենց կէտերովը սերտել ու վարժապետին ըսելովը գրել սեւ տախտակին վրայ։

Փառք տանք Աստուծոյ, վասն զի մեծ է. Աստուած ամէն տեղ է, ամէն բան կը տեսնէ. օրհնենք զԱստուած, վասն զի ամենակարող է։ — Ամէն բան Աստուած է ստեղծեր. արեւը՝ օրուան իշխելու համար, լուսինը՝ գիշերուան լոյս տալու համար։ — Կէտն՝ որ ովկիանոսին ալիքները կը պատռէ, փիղն՝ որ լեռներու վրայ կը վազվըզէ, ու գետնին երեսը սողացող օրդն, ամէնն ալ Աստուծոյ ստեղծուածներն են։ — Թռչուններն կանանչ ճիւղերու վրայ ճըւճըւալու ատեն՝ Աստուծոյ գովեստ կ'երգեն. առուակն քարերու մէջ ֆշֆշալով վազելու ատեն՝ Աստուծոյ անունը կ'օրհնէ։ — Ես ալ թէպէտ դեռ պզտի տղայ մ'եմ, ես ալ փառք կուտամ Աստուծոյ։ — Դեռ շատ տարի չէ որ ծներ եմ, անկէ առաջ լեզուս կապուած էր. թէ Աստուած կայ՝ և ոչ գայն գիտէի. բանի մ'ալ չէի կրնար խելք հասցնել։ — Հիմայ որ կրնամ խօսիլ, պէտք է որ իրեն փառք տամ. իր բարերարութիւնները կրնամ ճանչնալ, պէտք է որ բոլոր սրտով զինքը սիրեմ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուած

Ի՛Ժ Ա ԽՐԴՈՅ

Իժ մտեալ 'ի դարբնոց՝ եխած զխարտոց։ Նա 'ի դիմի նմա հարեալ կարծրապինդ՝ ասէ. Անմիտ, ընդէ՞ր ատամամբ հնարիս զուսանել ինձ, որ գիտեմ զբնաւ իսկ մաշել զերկաթ։

— Որ խիստ ժանեաք խածանէ խստագոյն ինչ, զիւրն յարացոյց տեսցէ ասա։

Թարգմանութիւն

Ի՛Ժ ԵՒ ԽՐԴՈՅԸ

Օձ մը դարբինի խանութը մտնելով խարտոցը խածաւ։ Նա սատիկ պնդութեամբ իրեն դէմ դնելով ըսաւ. Անխելք, ինչու՞ ակռայով կը ջանաս վնասել ինծի՝ որ բոլոր երկաթը կրնամ մաշեցնել։

— Ով որ պինդ ակռաներով իրմէ աւելի պինդ բան մը խածնէ, թող հոս իր պատկերը տեսնէ։

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Գոյական և Ածական

20. Անուն կ'ըսուին ի՞նչ և ինչպիսի՞ ըլլալը նշանակող բառերն։ Օրինակ. բան, մարդ, հաւ, բարի, չար, մեծ։

21. Անունը Գոյական կ'ըսուի՝ եթէ ի՞նչ ըլլալ նշանակէ։ Բան, մարդ, հաւ միկմիկ գոյականներ են, վասն զի այս բառերը լսած առենեիս՝ ի՞նչ ըլլալին կ'իմանանք։

22. Անունն Ածական կ'ըսուի՝ եթէ ի՞նչպէս ըլլալ նշանակէ։ Բարի, չար, մեծ միկմիկ ածականներ են, վասն զի գոյականներուն քով դրուելով՝ անոնց ի՞նչպէս ըլլալը կ'իմացնեն. բան բարի, մարդ չար, մեծ ծառ։

Ծանօթ. — Եթէ բառի մը քով մարդ, բան կրնանք դնել, Ածական է, ապա թէ ոչ՝ Գոյական է։ Օրինակ, չար, մեծ, բարի, վնասակար, կարևոր բառերն ածական են, վասն զի կրնանք ըսել չար բան կամ չար մարդ, մեծ բան կամ մեծ մարդ, բարի բան կամ բարի մարդ, և այլն. բայց հաց, չուր, ծառ, բանաք, կաղամար բառերը գոյական են կ'ըսենք, վասն զի չըսուիր հաց բան կամ մարդ, չուր բան կամ մարդ, ծառ բան կամ մարդ, և այլն։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. — Հետեւեալ բառերուն մէջ որո՞նք գոյական են եւ որո՞նք ածական։

Մաքուր, պատիւ, տղայ, կոյր, տուն, փոքր, սիրտ, գետին, լուսաւոր, հայելի, դժուար, արեգակն, արթուն, գրատուն, խոտ, ծեր, իշխան, ազգական, բարեգործ, արդար, ճրագ, սալոր, կծու, երկչոտ, ոսկի, դղում, հա-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 20. Ո՞ր բառերն ԱՆՈՒՆ կ'ըսուին — 21. Ե՞րբ անունը ԳՈՅԱԿԱՆ կ'ըսուի — 22. Ե՞րբ անունն ԱԾԱԿԱՆ կ'ըսուի։

սուն, աթոռ, պտուղ, հոտած, արուեստ, հպարտ, հանոյ, ամիս, կայտառ, կոպիտ, ժամկոչ, եկեղեցի, սուրբ, պըսակ, աղօտ, աղուէս, դինուոր, անսանձ, նախանձ, կաղ, քաջ, աքաղաղ, ճերմակ, կատակ, կապիկ, հակառակ, ընտիր, ատոլ, քաղաք, հաց, ցած, ամպոտ, խաւար, մթին, բրդոտ, անօթ, անուշահոտ, աղքատ, բանտ, թըշնամի, կղզի, պանդոկ, գարուն, ուրախ, բարկացոտ, քննութիւն։

Բ. — Գոյականներուն քով մէկ մէկ ածական, եւ ածականներուն քով գոյական դնել։

Պարիսպ, գիտուն, գիրք, քաղաք, թուղթ, կարճ, կապոյտ, օտար, հանճար, ծուռ, պարտէզ, կտրոց, խորթ, ծաղիկ, փոքրիկ, ալիք, անասունք, ջրհոր, գառնուկ, մայր, գարուն, շուն, աշխարհ, ժամանակ, դատաւոր, բարեգութ, աղայ, դժուար, արեգակն, հպարտ, եկեղեցի, բանտ, բարկացոտ, ուրախ, քննութիւն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Հ—— Եր՝ էնդ՝ էնդ՝

Սոխակ, սարեկ, և այլք սոցին հանդոյն հաւիկք երգեցիկք, ոչ թէ ինքեանք ևեթ ախորժեն նուագել, այլ և սիրեն զդայլայլիկս այլոց։

— Առակս այս յանդիմանէ զչար նախանձ, և խրատէ ախորժել ընդ շնորհս այլոց։

Թարգմանութիւն

Եր՝ էրդ՝ Բ—ը—ննէր

Սոխակը, սարեկն և ուրիշ սոնց նման երգող թռչունները ոչ միայն իրենք երգել կ՚ախորժին, այլ նաև ուրիշներուն երգերը կը սիրեն։

— Այս առակը կը յանդիմանէ չար նախանձը, և կը խրատէ ուրիշներուն ձիրքերուն հաւնիլ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Յատուկ և Հասարակ գոյականներ

23. Գոյականը երկու տեսակ է, Յատուկ և Հասարակ։

24. Յատուկ գոյականներ են՝ մարդկանց և ամէն իրաց անուններն որ մէկ հատէն աւելի չեն ըլլար։ Զոր օրինակ. Ադամ, Եւա, Երուսաղէմ, Յորդանան։

25. Հասարակ գոյականներ են։ Զոր օրինակ. Մարդ, շուն, գիրք, տուն, քաղաք։

Ծանօթ. — Յատուկ գոյականները գլխագրով կը գրուին։

17482

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հետեւեալ խօսքերուն մէջ շեղագիր գոյականներուն յատուկ եւ հասարակ ըլլալն որոշել։

Յիսուս ըսաւ. Թող տուէք որ պզտիկ տղաքն ինծի գան։ — Աստուած կը խնամէ Թփերուն վրայ թռչող թռչնիկը։ — Կայէն իր Աբել եղբայրն սպաննեց։ — Յովսեփայ եղբայրներն գինքը Մադիանացի վաճառականաց ծախեցին։ — Յուդա՝ որ զՅիսուս Քրիստոս մատնեց, առաքեալներէն մէկն էր։ — Կուռնելիոս հարիւրապետն հաւատաց ու մկրտուեցաւ Պետրոս առաքելոյն քարոզութեամբ։ — Մովսէս մեծ հրաշքներով Իսրայելացիներն Եգիպտոսէն հանեց, կարմիր ծովէն անցուց և Աւետեաց երկիրը մտնելէն առաջ մեռաւ։ — Հայոց աշխարհը քրիստոնէութիւն ընդունեցաւ Թադէոս առաքելոյն և Գրիգոր Լուսաւորչայ ձեռքով։ — Զրհեղեղէն ետքը Նոյայ տապանը Մասիս լերան վրայ իջաւ։ — Մեծն Աղեքսանդր տղայութեանն ատեն իր փիլիսոփոս հայրը զարմացուց։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 23. Գոյականը քանի՞ տեսակ է — 24. ՅԱՏՈՒԿ ո՞ր գոյականները կ'ըսուին — 25. Որո՞նք կ'ըսուին ՀԱՍԱՐԱԿ։

ՀԱՅՈՑ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌՏՐՈՍԱՆ

Բ. Հետեւեալ յատուկ գոյականաց քով մէկմէկ հասարակ գոյական, եւ հասարակ գոյականաց քով մէկ մէկ պատշաճ յատուկ գոյական դնել։

Աթէնք, կայսր, ազգ, մարգարէ, Եփրատ, ծով, եկեղեցի, Պաղեստին, քահանայ, Սուուղ, առաքեալ, Մարիամ, գիւղ, գետ, Կարին, կաթողիկոս, վանք, լրագիր, տօն, կղզի, հրեշտակ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ	*Թարգմանութիւն*
Յ--ւ ԻՆ-Ք-Ր	ԻՆՔ ԷՐԵՆ Կ---Ղ Յ--ԼԸ
Յուլ յոգորել իւրում ուժգին եհար զգետնի զեղջերս, և խորտակեալ՝ գտաւ ապաղէն և անշուք. 'ի բուսանել անդրէն ապա եղջերացն, ուստ այնուհետև մի՛ ևս հողահանել եղջերոք։	*Յուլն ինքն իրեն կռուելու ատեն ուժով մը եղջիւրները գետին զարկաւ, և կոտրելով առանց զէնքի և առանց զարդի մնաց. երբոր կոտոշները նորէն բուսան, սորվեցաւ անկէ վերջը մէյ մ'ալ անոնցմով հող չհանել։*
— *Յանդգնութիւն յաճախ զգօնանալ ուսանի 'ի վտանգս։*	— *Շատ անգամ յանդգնութիւնը վտանգի մէջ խելք ըլլալ կը սորվի։*

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Եզակի և Յոգնակի

26. Անուններուն մէկ և շատ ըլլալը թիւ կ'ըսուի։

27. Քերականութեան մէջ թիւը երկուք է, եզակի և յոգնակի

28. Անուն մը եզակի կ'ըսուի՝ երբ մէկ անձ կամ մէկ բան կը նշանակէ։ Օրինակ. Մարդ, թռչուն, պարտէզ, Տնող. կ'իմանանք մէկ մարդ, մէկ թռչուն, մէկ պարտէզ, մէկ Տնող։

29. Անուն մը յոգնակի կ'ըսուի երբ մէկէն աւելի անձ կամ բան կը ցուցընէ։ Ինչպէս. Մարդիկ, թռչուններ, պարտէզներ, Տնողք. կ'իմանանք շատ մարդ, շատ թռչուն, և այլն։

30. Եզակի բառ մը յոգնակի կ'ըլլայ՝ Ծայրը ք մը դնելով։ Օրինակ. Մարդք, թռչունք, պարտէզք, Տնողք։

Դրանօրութիւն. — Յատուկ գոյականները միայն եզակի կը բանին։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Հետեւեալ բառերուն եզակիներն յոգնակի ընել, եւ յոգնակիներն՝ եզակի։

Անբան, աթոռք, բանալի, բաժակ, գիրք, գրիչ, դաս, դպրատուն, երկինք, երես, զօրք, զօրավար, ընտանիք, ընկոյզ, թաղ, թշնամի, ժանգ, ժամանակ, իշխանք, Իսրայէլացի, խորհուրդ, խաբեբայ, Ծնողք, Ծանօթ, կաղա-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 26. Ի՞նչ է թիւն — 27. Քերականութեան մէջ թիւը քանի՞ է — 28. Անուն մը ե՞րբ ԵԶԱԿի կ'ըսուի — 29. Ե՞րբ ՅՈԳՆԱԿի կ'ըսուի անուն մը — 30. Գրաբարի մէջ եզակի բառ մը ինչպէս յոգնակի կ'ըլլայ։

մար, կրօնք, հայ, հայրենիք, ձող, ճագար, ճնճղուկ, մարդ, մայրաքաղաք, յիմար, յիշիլիք, նամակ, նեռաձիգ, շահ, շարք, շնորհք, ոճիր, ունելիք, չափ, չարիք, պատանի, պիտոյք, ջահ, ջանք, սահման, սարկաւագ, վարք, վիճակ, վանք, տեսրակ, տարիք, ցայգ (գիշեր), ցամաք, փայտ, փափաք, քաղաք, օրէնք։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Հ-ՎԷ- Ի ԱՅԺ

Հովիւ 'ի հարուած ցպոյն բեկեալ զեղջիւր ուրուն ի յայծից, աղերս նմա արկանէր մի՛ յայտնել զայն տեսարն իւրում։ Իսկ նա ասէ. Թէպէտ յանիրաւի վշտակրեալ, այլ լռեցից. սակայն մեղք քո ինքնին իսկ գայցեն յերևան։

Թարգմանութիւն

Հ-ՎԷ-Ն -- ԱՅԺԸ

Հովիւն իր փայտին հարուածով այծերէն մէկուն կոտոշը կոտրելով կ'աղաչէր անոր որ զայն տիրոջը չիմացընէ։ Իսկ նա Թէպէտ և անիրաւ տեղ ցաւ քաշեցի, սակայն կը լռեմ, ըսաւ. բայց քու յանցանքդ ինք իրմէ պիտի յայտնուի։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Հոլով

31. *Խօսելու և գրելու միջոց անուններն այլ և այլ ձևեր կ'առնուն. այս ձևերն Հոլով կ'ըսուին։ Օրինակ. Մարդ բառն երբեմն կ'ըլլայ մարդոյ, երբեմն մարդով, երբեմն զմարդ, և երբեմն 'ի մարդոյ։*

32. *Վեց տեսակ հոլով կայ.* Ուղղական, Սեռական, Տրական, Գործիական, Բացառական *և* Հայցական։

33. *Ուղղականը բառի մը չփոխուած ձևն է։ Օրինակ. Մարդ, թռչուն, գրիչ։*

34. *Վերջաձոլով կ'ըսուին այն հոլովները՝ որ ուղղականին ծայրը գիր կամ վանկ աւելցընելով կը ձևանան։ Օրինակ. Մարդոյ, մարդով, հացի, հացիս, քաղաքի, քաղաքաս։*

35. *Նախդրիւ կ'ըսուին այն հոլովները՝ որ ուղղականին սկիզբը զ, 'ի գրերն աւելցընելով կը ձևանան։ Օրինակ. Զմարդ, 'ի մարդ, զքաղաք, 'ի քաղաք, են։*

Ծանօթ. — Զայնաւորով սկսած բառերն 'ի գրին տեղ յ կ'առնեն։ Զոր օրինակ յոսկի, յաղքատ, յառիւծ։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել հետեւեալ բառից մէջ ու նշանակել՝ որո՞նք Ն-ԻԴՐԻ- են եւ որո՞նք ՁԵՐՋ-ՀՈԼՈՎ։

Որդւոյ, 'ի տուն, մարդոյ, չարեաց, 'ի վարս, օրինաց, 'ի բան, 'ի հայրենիս, զնա, 'ի նոցանէ, ամենեցուն, զօ-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 31. ՀՈԼՈՎ ԻՆՉ Է — 32. Քանի՞ տեսակ հոլով կայ և որո՞նք են — 33. ՈՒՂՂԱԿԱՆ հոլովը ո՞րն է — 34. ՎԵՐՋԱՀՈԼՈՎ ո՞ր հոլովները կ'ըսուին — 35. Որո՞նք ՆԱԽԴՐԻՒ կ'ըսուին։

բութեամբ, 'ի նոսա, աւուրց, յաւուրս, զարեգակն, ի նեղութեան, սրբութեան, խորհրդոյ, 'ի սերմ, յայգի, սիրելւոյ, 'ի դառնութիւնս, թշնամեաց, քաղաքաք, յարաբածոց, զերկինս, յաստեղաց, ծաղկանց, 'ի ջուր, հրով, ցամաքի, 'ի սահման, երկրի, յիշխան, 'ի բարիս, գործոց, խրատուց, 'ի ժամանակս։

Բ. Հետեւեալ բառից սկիզբն է կամ յ նախդիր դնել ըստ պատշաճի։

Արութիւն (քաջութիւն), նեղութիւն, վարդ, աղբիւր, տուն, տեսիլ, աստղ, մանուկ, ծնունդ, զալուստ, ալիւր, ուստր (մանչ), ժողովուրդ, մարդիկ, ոսկր, հայր, որդի, դուստր (աղջիկ), արքայ, մայր, աղօթք, սիրտ, համբոյր, խուլ, ուխտ, այր, ծեր, ձի, ուս, սէր, հուր, գժոխք, ջուր, ունդ, սեաւ, թիւ, ոյժ, հին, աչ (աչ ձեռք), ակն, զարդ, արև, ծով, մահ, փոքր, ազգր, զէն, բժիշկ, կարգ, հովիւ, այգի, հարան, եկեղեցի։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Ե--վդ-- Ե վ-ր--վէր-յ

Վարսավիրայ անվարժ սափրելով երբեմն զգլուխ Եսովպոսի, դառնակսկիծ ցաւս տայր նմա ածելեաւ։ Յայնմ վայրի եղն բառաչելով անցանէր ընդ դռեհն։ Հարցանէ վարսավիրայն թէ ընդէ՞ր արջառն այնպէս աղիողորմ կողկողէր։ Յայնժամ ասէ բաղմահամբեր ծերունին. Թերևս վարսավիրայ անփորձ վիրայ ըզհերս հիքին։

Թարգմանութիւն

Ե--վդ-- Ե --էրէն

Անվարժ սափրիչ (պէրպէր) մը առենաք Եզովբոսին գլուխը սափրելու միջոց՝ ածելիով սաստիկ ցաւ կը պատճառէր անոր։ Այն միջոցին եզ մը պոռալով փողոցէն կ'անցնէր։ Կը հարցընէ սափրիչը թէ ինչու՞ կոմն այնպէս խեղճ կերպով կը պոռայ։ Այն առեն համբերող ծերունին ըսաւ. Կարելի է թէ անվարժ սափրիչ մը խեղճին մազերը կ'ածիլէ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Նոյն դասին շարունակութիւնը

36. Հայցականը նախդրիւ հոլով է. հայցականին նախդիրն է զ գիրը։ Օրինակ. զմարդ, զպատիւ, զքաղաք։

37. Սեռական և գործիական հոլովները վերջահոլով են՝ և գործիականը միշտ կամ ք կամ վ և կամ ՝ գրերով կը վերջանայ։ Օրինակ. Սեռական — Սուրբ՝ սրբոյ, բան՝ բանի, սիրտ՝ սրտի։ Գործիական — Մարդ՝ մարդով, աստղ՝ աստղոք, և այլն։

38. Տրական հոլովն երկու տեսակ է. Նախդրիւ տրական և Վերջահոլով տրական։ Նախդրիւ տրականն 'ի կամ յ գրով կը ձևանայ։ Վերջահոլով տրականը սեռականի հետ նոյն է։

39. Բացառականը թէ նախդրիւ է թէ վերջահոլով, այսինքն՝ սկիզբն 'ի կամ յ նախդիրն ունի և ծայրն ալ գիր կամ վանկ կ'աւելնայ։ Զոր օրինակ. Ադամ, քաղաք, մարդ բառերն բացառական կ'ըլլան. յԱդամայ, 'ի քաղաքէ, 'ի մարդոյ։

40. Ամէն հոլով ունի նաև իր յոգնակի ձևն։

41. Հոլովներուն յոգնակի ձևերն այս երեք գրերով կը վերջանան, ք, ց, ս։ Ուղղականին յոգնակին ք-ով կ'ըլլայ. վերջահոլովներունը՝ ց-ով, իսկ նախդրիւ բառածներունը ս գրով։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 36. ՀԱՅՑԱԿԱՆ հոլովը վերջահոլով է թէ նախդրիւ — 37. Ինչ տեսակ հոլով են ՍԵՌԱԿԱՆն ու ԳՈՐԾԻԱԿԱՆը — 38. ՏՐԱԿԱՆը քանի՞ տեսակ է, և ՆԱԽԴՐԻՒ ՏՐԱԿԱՆԻՆ նախդիրն ինչ է — 39. Ինչ տեսակ հոլով է ԲԱՑԱՌԱԿԱՆն — 40. Ամէն հոլով յոգնակի ձև ունի՞ թէ չէ — 41. Հոլովներուն յոգնակի ձևերն ինչ գրերով կրնան վերջանալ։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել ու նշանակել թէ հետեւեալ հոլովներէն որո՞նք եզակի են եւ որո՞նք յոգնակի։

Հոգիք, կին, եկեղեցիք, երկինք, տէր, գիւղ, աւուրք, ձիւն, ձկունք, սկզբունք, դուռն, արիւն, պաշտամունք, անուանք, ձմերունք, եղեամն, տիւք, կայսերք, տարիք, դժոխք, լոյս, գառն, ձեռք, ականջք, ունկն, ոտք, ազգ, լերինք, որդիք։

Բ. Հետեւեալ բառերուն ի՞նչ հոլով եւ ի՞նչ թիւ ըլլալն որոշել ու նշանակել։

Մարգարէից, գիր, ձեռց, վիճակաւ, բանից, 'ի ծով, գետոց, արեւու, զփոքունս, 'ի կողմանէ, սեանց, պաշտպանութեանց, խորհրդովք, սրբութեամբ, 'ի հաւատոց, 'ի տեառնէ, զփուչ, մանկանց, զաղայս, զփոքր, մեծաց, պտուղ, դաշտք, խոտ, ոսկերք, յամառն, հրոյ, 'ի սէր, վարագոյր, սրահ, քաղաքաւ, մանուկ, տան, ծովու, 'ի սեղան, գաւազանաւ, 'ի մարդոյ, խաչ, մուտք, մահու, բերանի, արքայի, հրեշտակ, արեամբ, յորդւոյ, զերկինս, ամաց, կուսանաց։

ԳԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Խոյ Ի հայրէ

Խոյ հարեալ զմայր եղջերաքն հապատէպ՝ թափէ զնոսա, և առ զայրոյթ անիծանէ զծառն։ Ուստ նա ասէ. Քեզէն է չարեաց քոց առիթ, զի 'ի զուր ինձ անմեղիս մեղադրես դու։

— *Առակս ասացեալ է 'ի խրատս այնոցիկ որք արկանեն յայլս զվնաս ախտից իւրեանց։*

Թարգմանութիւն

Խոյը Ի հայրէ ծ—ը

Խոյը (գոչ) ատէպ ատէպ եղջիւրներովը մայրի ծառոյն զարնելով՝ զանոնք կը թափէ, և բարկութենէն ծառը կ'անիծէ։ Որուն ծառը կ'ըսէ. Քեզմէ է քու չարեացդ պատճառն. ինչու զուր տեղ զիս կը մեղադրես՝ որ յանցանք չունիմ։

—*Այս առակն ըսուած է 'ի խրատս անոնց՝ որ իրենց մոլութեանց վնասն ուրիշի վրայ կը ձգեն։*

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Հոլովմունք

42. Բառ մը հոլովել՝ ըսել է անոր ամէն հոլովները գուրցել։

43. Ամէն բառեր միևնոյն կերպով չեն հոլովիր. բառերն հոլովելու զանազան կերպերն Հոլովմունք կ՚ըսուին։

44. Հինգ գլխաւոր հոլովմունք կայ գրաբառին մէջ, և իրարմէ կը տարբերին բառից սեռականներուն վերջին ձայնաւոր գրերով, որ նշանագիր կ՚ըսուին։

45. Առաջին հոլովման նշանագիրն է ա։ Օրինակ. Հայկ՝ Հայկ–այ. սերմն՝ սերմ–ան, և այլն։

46. Երկրորդ հոլովման նշանագիրն է ե։ Օրինակ. Հաւր՝ հաւ–եր. ատող՝ ատող–եղ, և այլն։

47. Երրորդ հոլովման նշանագիրն է ի։ Օրինակ. Այր՝ Այր–ի (քարայր), բան՝ բան–ի (խօսք) և այլն։

48. Չորրորդ հոլովման նշանագիրն է ո։ Օրինակ. Մարդ՝ մարդ–ոյ. գետ՝ գետ–ոյ, և այլն։

49. Հինգերորդ հոլովման նշանագիրն ու։ Օրինակ. Զարդ՝ զարդ–ու. փոքր՝ փոք–ու, և այլն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 42. Ի՞նչ ըսել է ՀՈԼՈՎԵԼ – 43. ՀՈԼՈՎՄՈՒՆՔ ըսելով ի՞նչ կ՚իմացուի – 44. Քանի՞ տեսակ հոլովմունք կայ և իրարմէ ի՞նչպէս կը տարբերին – 45. Առաջին հոլովման նշանագիրը ի՞նչ է – 46. Երկրորդին 47. Երրորդին – 48. Չորրորդէն – 49. Հինգերորդին։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Որոշել ու նշանակել թէ ո՞ր հոլովման կը վերաբերին հետեւեալ բառից սեռական հոլովներն։

Ամրմանց, գետոյ, ծովու, բանի, ուստերց, զօրութեան, եղջեր, ձեան, իժի, ձիոյ, մահու, թեւոյ, առաւօտու, իրաւանց, ձմերան, ուսոյ, ալեր, պարտուց, համբուրի, զինու, ուժոյ, սրտի, սրբութեան, դրան, ցլու, սիրոյ, արքայի, զօրու, արեան, ատենի, դասու, ծերոյ, եղեման, կայսեր, խլի, պահոց, վարուց, գալատեան, ըղձի, գրոյ, վաղուեան, տարեր, հրէի, ազգեր, գանձու, վերնոյ, ընչից, սկզբան, նեան։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Ն—գ—տ—կ

Նապաստակ երբեմն հարցեալ թէ ընդէ՞ր այդքան երկչոտ ես, ասէ. Քանզի դարանին մեզ շունք, արծիւք, և արք. արդ չրջապատեալ յայսքան վտանգաց չիցէ՞ պարտ ինձ զահի մեծի հարկանել։

— Առակս այս խրատէ՝ի զգուշութիւն, որք աներ-կիւղ կան ի վտանգի շուրջ պատեալ ի թշնամեաց։

Թարգմանութիւն

Ն—գ—տ—կ

Անգամ մը հարցուցին նապաստակին թէ ինչու՞ այդչափ վախկոտ ես. պատասխանեց. Վասն զի մեզ բռնելու համար կը պահուրտին շուներն, արծիւներն և մարդիկ. ուրեմն այսչափ վտանգներ չորս կողմս ունեցած՝ պէտք չեմ սաստիկ վախնալ։

— Այս առակը զգուշութեան կը խրատէ զանոնք՝ որ վտանգի մէջ թշնամիներէն պաշարուած անվախ կը կենան։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Առաջին հոլովումն

50. *Առաջին հոլովման բառերուն սեռականն երբեմն* այ *կը վերջանայ և երբեմն* ան *կամ* եան։ *Օրինակ.* Հայկ — Հայկայ, արիւն — արեան, սերմն — սերմնան։

51. *Յատուկ գոյականաց սեռականն* այ *կը կը վերջանայ, և հասարակ գոյականացն՝* ան *կամ* եան, *ինչպէս վերի բառերուն մէջ կը տեսնուի։*

52. *Հայկ բառն, որուն պէս կ'ըլլան ուրիշ շատ յատուկ գոյականներ, այսպէս կը հոլովի.*

Ո–ղղ–ի–ն — . Հայկ	Հայկ (*մեր ազգին նախահայրը*)
Ան–ա–ի–ն — . Հայկ–ա՛յ	Հայկին
Տր–ի–ն — . Հայկ–ա՛յ, 'ի Հայկ	Հայկին, Հայկին վրայ
Գ–ործ–ի–ն — . Հայկ–ա՛	Հայկով
Բ–ա–ա–ա–ի–ն — . 'ի Հայկ–ա՛յ	Հայկէն
Հ–ա–յ–ի–ն — . ՚ւ Հայկ	Հայկը։

53. *Սերմն բառն, որուն պէս կ'ըլլան ուրիշ շատ հասարակ գոյականք, այսպէս կը հոլովի.*

Եզակի			*Յոգնակի*	
Ո–ղ.	Սերմն	հունտ	Սերմ–ա՛ն	հունտեր
Ան–.	Սերմ–ա՛ն	հունտի	Սերմ–ա՛ն	հունտերու
Տր–.	Սերմ–ա՛ն,	հունտի,	Սերմ–ա՛ն,	հունտերու,
	'ի Սերմն	–մէջ	'ի Սերմ–ա՛ն	–մէջ
Գ–ործ.	Սերմ–ա՛մբ	հունտով	Սերմ–ա՛մբ	հունտերով
Բ–ա.	'ի Սերմ–ա՛նէ	հունտէ	'ի Սերմ–ա՛ն	հունտերէ
Հ–այ.	՚ւ Սերմն	հունտը.	՚ւ Սերմ–ա՛ն	հունտերը։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 50. *Առաջին հոլովման բառից սեռականն ինչպէս կ'ըլլայ* – 51. *Ինչպէս կ'ըլլայ յատուկ և հասարակ գոյականաց սեռականի վերջաւորութիւնն* – 52. *Հոլովէ* ՀԱՅԿ *բառն* – 53. *Հոլովէ* ՍԵՐՄՆ *բառն։*

Ծանօթ. Ուղղականի մէջ ա վերջացող բառերը սեռական կ'ըլլան ծայրերնին յ մը գնելով։ Օրինակ. Գաղատիա՝ Գաղատիայ, Իտալիա՝ Իտալիայ։

Նմանապէս ա վերջացող բառերը սեռական կ'ըլլան՝ սի տեղ յ գնելով։ Օրինակ. Ղուկաս՝ Ղուկայ. Յուդաս՝ Յուդայ, և այլն։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հոլովել ՀԱՅԿ բառին պէս հետեւեալներն։

Սարա, Եսայի, Յեսու, Եղեմ, Ադին, Յուդաս, Արտեմիս, Անահիտ, Գալիլիա, դաբիր, Ղուկաս, Յակոբ, Վարդան։

Բ. Հոլովել հետեւեալ բառերը ՍԵՐՄՆ բառին պէս։

Կողմն, ամառն, ձմեռն, գեղարդն, ակն, որդն, որոմն (գէշ խոտ), ունկն, եռանդն, զողթն, անուն, ձեղուն, մահ, պաշտօն, ձիւն, սիւն, արիւն, զօրութիւն, եղեռն, աղեղն, արեգակն, ջերմն, հիմն, հիւսն, եղէգն, սկիզբն, դուռն, եղեամն, աղջիկ, մարդիկ, մանուկ, գարուն, տուն, տեսիլ, հանգիստ, գարուստ, ժողովուրդ, ծնունդ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Աղ—նի ՝ յ—ք՝ ի—ր

Ուրումն գգուեալ երբեմն զձագ ագաւնոյ, գովեալ ներբողէր զմիամիտ բարս նորին։ Ում վարուժնակն ասէ. Եթէ ատուգիս զանկեղծութիւն իմ գովես, այր գու, ընդէր կեղծաւորութեամբ դաւ գործես կենաց իմոց։

—Առակս այս յանդիմանէ զսիրտ անողորմ անիրաւաց, որք զեղծանին բարութեամբ առաքինեաց։

Թարգմանութիւն

Աղ—նին ՝ ի—ր յ—քերը

Ժամանակաւ մարդուն մէկն ագաւնոյ մը ձագը գգուելով, անոր միամիտ բնութիւնը կը գովէր։ Ա-ղաւնին ըսաւ. Թէ որ ճշմարտապէս անկեղծութիւնս կը գովես, ով մարդ, ինչու կենացս որոգայթ կը լարես։

— Այս առակը կը յանդիմանէ անողորմ անիրաւաց սիրտը, որոնք առաքինիներուն բարութեամբը կը զեղծանին։

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Երկրորդ հոլովումն

54. *Երկրորդ հոլովման բառից սեռականները կամ՝ ը կը վերջանան կամ՝ եղ։*

55. *Սեռական ը կը վերջանան՝ ը վերջացող բառերն։ Օրինակ. Համր—հաներ (մունջ), կայսր—կայսրեր, ոսկր—ոսկեր։*

56. *Սեռական եղ կը վերջանան՝ ող վերջացող բառերն։ Օրինակ. Աստղ—աստեղ, անգղ—անգղեղ (ագռաւաց թռչունը), արկղ—արկեղ (անոուկ)։*

57. *Համր բառն այսպէս կը հոլովի.*

Եզակի

Ո. Համր	*մունջ*
Ս. Համ-ի	*մունջի*
Տ. Համ-ի, 'ի Համր	*մունջի, — վրան*
Գ. Համ-իբ	*մունջով*
Բ. 'ի Համ-իբ	*մունջէ*
Հ. ՝ը Համր	*մունջը*

Յոգնակի

Ո. Համ-իբ	*մունջեր*
Ս. Համ-ից	*մունջերու*
Տ. Համ-ից 'ի Համ-իբ	*մունջերու, — մէջ*
Գ. Համ-իբ	*մունջերով*
Բ. 'ի Համ-ից	*մունջերէ*
Հ. ՝ը Համ-իբ	*մունջերը*

58. *Աստղ բառն այսպէս կը հոլովի.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 54. Ինչպէս կը վերջանան երկրորդ հոլովման բառից սեռականները — 55. Սեռական ը որ բառերը կը վերջանան — 56. Որ բառերը սեռական եղ կը վերջանան — 57. Հոլովէ ՀԱՄՐ բառն — 58. Հոլովէ ԱՍՏՂ բառն։

Եզակի		Յոգնակի	
Ո. Ասող	ասող	Ասող-ք	ասողք
Ս. Ասող-ի	ասողի	Ասող-ց	ասողքու
Տ. Ասող-ի,	ասողի,	Ասող-ց,	ասողքու,
յԱսող	— մէջ	յԱսող-ս	— մէջ
Գ. Ասող-ով	ասողով	Ասող-ք-ով	ասողքով
Բ. յԱսող-էն	ասողէ	յԱսող-ց	ասողքէ
Հ. զԱսող	ասողը	զ Ասող-ս	ասողքը

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հ-ի բառին պէս հոլովել հետեւեալներն։

Ազգը, կայսը, վազը, տայգը, տարը, եզը, ոսկը, ուստը, գուտը, ալիւը, աղբիւը, եղջիւը։

Բ. Հոլովել Ա-ող բառին պէս հետեւեալներն։

Արկղ, եղ, բանակեղ, կոճղ, շիգղ (զարդի կոճակ)։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Անդիտ ինքնամոռն

Ընթերցեալ անմիտն 'ի մատենի ուրեմն զի որոց երկայն է կղակ յաճախ կարճամիտ գտանին, ա՛ռ հայելի. և քանզի մթին գիշեր էր՝ կալեալ միւսով ձեռամբ ճրագ մինչ զննէր զկղակն իւր, յանկարծ հուր 'ի ճրագէն առեալ կիզան ալիքն։ Յայնժամ յաւել նա 'ի ստորև մատենին. «Այո՛, այդպէս է, և ես ինձէն զփորձ առեալ վկայեմ»։

— Անմիտն ինքնին իսկ տայ հաւատոխ անմտութեան իւրում։

Թարգմանութիւն

Ինքնին մոռնող անդիտը

Անմիտը գրքի մը մէջ կարդալով թէ որոնց որ ծնօտը երկայն է շատ անգամ կարճմիտք կ'ունենան, հայելին առաւ, և որովհետև մութ գիշեր էր, միւս ձեռքով ճրագը բռնած երբ կղակը կը զննէր, յանկարծ մազերը ճրագէն բռընկելով այրեցան։ Այն ատեն գրքին տակն աւելցուց. «Այո՛, այդպէս է, ես ալ անձամբ փորձն առնելով կը վկայեմ»։

— Անմիտն ինքնիրմէ իսկ իր անմտութեան փորձը կու տայ։

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Երրորդ հոլովումն

59. Երրորդ հոլովման բառից սեռականները ի կը վերջանան։ Օրինակ. Այր—այրի (քաջայր), մարգարէ—մարգարէի, սիրտ—սրտի։

60. Այր բառն, որուն պէս կ'ըլլան շատ մը բառեր, այսպէս կը հոլովի.

Եզակի

Ո. Այր	*քաջայր*
Ս. Այր-է	*քաջայրի*
Տ. Այր-է, յԱյր	*քաջայրի, — մէջ*
Գ. Այր-է-	*քաջայրով*
Բ. յԱյր-է	*քաջայրէ*
Հ. զԱյր	*քաջայրը*

Յոգնակի

Ո. Այրք	*քաջայրներ*
Ս. Այր-ից	*քաջայրներու*
Տ. Այր-ից, յԱյրս	*քաջայրներու, — մէջ*
Գ. Այր-ից-ք	*քաջայրներով*
Բ. Այր-ից	*քաջայրներէ*
Հ. զԱյրս	*քաջայրները*

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Հոլովել հետեւեալ բառերն ըստ օրինակի ԱՅՐ բառին։

Բան, արքայ, բառ, հաց, մայր (չամի ծառ), վարդ, նեռ, մարգարէ, իժ, կող, ուխտ, տօն, օձ, շէն հանդէս, աղէտ, անէծք, իղձ, խիղճ, սիրտ, ճշմարիտ, բրուտ (հողէ աման շինող), խուլ, օգուտ, լեարդ, մատեան,

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 59. *Ի՞նչպէս կը վերջանան երրորդ հոլովման բառից սեռականները* — 60. *Հոլովէ ԱՅՐ բառն։*

աշտեայ, (Նիզակ), դուզնաքեայ, անոյշ, կոյս, համբոյր, Աբէլ, Իսրայէլ, Կայէն, Մովսէս. Արտաշէս, Կոստանդինոպօլիս։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Լեռն ՅՆՆԳՈՒՆ

Լեառն 'ի յերկունս հեծէր 'ի ճիչ մեծագոչ. Երկիր համայն դէտ ակն ունէր 'ի յոյս մեծ։ Իսկ նա էած մուկն 'ի լոյս։

— Այս քեզ 'ի խրատ ասացաւ, Որ մեծամեծս ըսպառնաս Եւ վրճարես իսկ ոչ ինչ։

Թարգմանութիւն

Ծնանող լեռը

Լեռ մը (երկունքի) ցաւին մէջ ահաւոր ձայնով կը հեծէր. բոլոր աշխարհ մեծ բանի մը կը սպասէր։ Բայց նա մուկ մը ծնաւ։

— Այս բանս քեզի խրատի տեղ բսուեցաւ, որ մեծ մեծ բաներ կը խոստանաս և բան մը չես ըներ։

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Չորրորդ հոլովումն

61. Չորրորդ հոլովման բառից սեռականները ոյ կը վերջանան։ Օրինակ՝ Մարդ—մարդոյ, ֆեր—ֆերոյ, Աստուած—Աստուծոյ։

62. Մարդ բառն այսպէս կը հոլովի։

Եզակի

Ո՝ Մարդ	մարդ
Ս՝ Մարդ-ոյ	մարդու
Տ՝ Մարդ-ոյ, Ի Մարդ՝	մարդու, — վրայ
Գ՝ Մարդ-ով	մարդով
Բ՝ Ի Մարդ-ոյ	մարդէ
Հ՝ Զ Մարդ	մարդը

Յոգնակի

Ո՝ Մարդք	մարդեր, մարդիկ
Ս՝ Մարդ-ոց	մարդերու
Տ՝ Մարդ-ոց, Ի Մարդս	մարդերու, — մէջ
Գ՝ Մարդ-ովք	մարդերով
Բ՝ Ի Մարդ-ոց	մարդերէ
Հ՝ Զ Մարդս	մարդերը

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԱՐԴ բառին հետեւութեամբ հոլովել վարի բառերն։

Աստուած (Տէր-բէր), աստուած (կոռոք), ամպ, բարբառ, բերան, հայ, հարաւ, գետ, երդ, ծեր, թեւ, երէ (վէրբէ կէնդոռնէ), ձի, հող, հողմ, ձու, ուս, օդ, պահք, տիկ (դոռբէք), դժոխք, էշ, գոմէշ, սէր, հին, կնիկ, մարմին, երկնային, վերին, ունդ, խորհուրդ, սուրբ, ջուր, անասուն, կուռք, կոչունք, ցորեան, գրեան, որեար, սեաւ, սեամբ, անդեայ (նոռնէր, դոռնէ), թիւ, անիւ, պատիւ, գոյն, լոյս։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 61. Ի՞նչպէս կը վերջանան չորրորդ հոլովման բառից սեռականները — 62. Հոլովէ ՄԱՐԴ բառն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցում

Զ--ր-ի Լ -ր

Յուլ ոմն ոգոբելով եղ-
ջերբք առ դրան որ անձուկ
էր 'ի մուտս, իբրև ոչ կա-
րէր մտանել 'ի գոմ անդր,
խրատէր զնա որթիկն 'ի
վայր գալարել։ Յայնժամ
ասէ ցուլ. Կարկեաց, չև
իսկ ծնեալ քո՝ զայս քաջ
գիտէի ես։

— Որ իշխէ խրատել
զգիտնագոյնն՝ զայս ինքեան
կալցի ասացեալ։

Թարգմանութիւն

Ց--ն Լ հ-ր-ը

Յուլ մը նեղ մուտք ունե-
ցող դրան մը առջև ծեծ-
կուելով՝ երբ չէր կրնար
մտնել սխոռին մէջ, պզտիկ
հորթն իրեն խրատ կուտար
որ վար ծռի։ Այն առեն
ցուլն բաւ. Լուռ կեցիր,
դու դեռ չծնած՝ ես այս բա-
նը շատ ազէկ գիտէի։

— Ով որ կը համարձակի
իրմէ աւելի գիտունը խրա-
տելու, այս խօսքն իր վրան
թող առնէ։

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Հինգերորդ հոլովումն

63. Հինգերորդ հոլովման բառից սեռականներն ու կը վերջանան։ Օրինակ. Զարդ—զարդու, ֆոմ—ֆոմու, զգեստ—զգեստու։

64. Զարդ բառն այսպէս կը հոլովի.

Եզակի		Յոգնակի	
Ո. Զարդ	զարդ	Զարդք	զարդեր
Ս. Զարդ-ս	զարդի	Զարդ-ց	զարդերու
Տ. Զարդ-ս,	զարդի,	Զարդ-ց,	զարդերու,
Ի Զարդ	– մէջ	Ի Զարդս	– մէջ
Գ. Զարդ-ս	զարդով	Զարդ-ս+	զարդերով
Բ. Ի Զարդ-ս-ի	զարդէ	Ի Զարդ-ց	զարդերէ
Հ. Ը Զարդ	զարդը	Ը Զարդս	զարդերը

65. Երկրորդ հոլովման որ վերջացող բանի մը բառից սեռականն ալ այս հոլովման պէս ու կ'ըլլայ։

66. Փոքր բառն այսպէս կը հոլովի.

Եզակի		Յոգնակի	
Ո. Փոքր	պզտիկ	Փոք-ունք+	պզտիկներ
Ս. Փոք-ս	պզտիկի	Փոք-ունց	պզտիկներու
Տ. Փոք-ս,	պզտիկի,	Փոք-ունց	պզտիկներու,
Ի Փոքր	– մէջ	Ի Փոք-ունս	– մէջ
Գ. Փոք-ս	պզտիկով	Փոք-ունք+	պզտիկներով
Բ. Ի Փոք-ս-ի	պզտիկէ	Ի Փոք-ունց	պզտիկներէն
Հ. Ը Փոքր	պզտիկը	Ը Փոք-ունս	պզտիկները

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 63. *Հինգերորդ հոլովման բառից սեռականներն ինչպէս կը վերջանան* – 64. *Հոլովէ ԶԱՐԴ բառն* – 65. *Ի՞նչ բառերու սեռականն այս հոլովման պէս ՈՒ կ'ըլլայ* – 66. *Հոլովէ ՓՈՔՐ բառն։*

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. ՋԱՐԴ բառին պէս հոլովել հետեւեալներն։

Այգ, սպաս, վեաս, գանձ, դաս, խրատ, ճակատ, նախանձ, զգեստ, ուղտ, զօր, ժամ, արև, ծով, ձագ, մահ։

Բ. ՓՈՔՐ բառին պէս հոլովել հետեւեալներն։

Բարձր, ասր (ՔՈՐԴ), թանձր, ծաղր, ծանր, կարծր, մանր, քաղցր, մեղր, անդորր, երկց։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Ս-ԿՐՈՏ ԵՒ ԳՈՒՆ ԷՐ

Սոկրատ կառուցանէր իւր տուն փոքրիկ. ոչ գիտեմ ո՞ յամբոխէն, որպէս պատահէ յաճախ՝ ձայն եբարձ. Աղէ դու այրդ այդպիսի՝ այդքան անձուկ կառուցանես քեզ տնակ։ Պատասխանի ետ Սոկրատ. Երանի՛ թէ լցցի դա ճշմարիտ բարեկամաք։

— Ցոգունք կոչին բարեկամք, բայց ճշմարիտք են սակաւք։

Թարգմանութիւն

Ս-ԿՐՈՏ ԵՒ ԷՐ ԳՈՒՆԸ

Սոկրատ իրեն համար պզտիկ տուն մը կը շինէր. չեմ գիտեր ով բազմութենէն՝ ինչպէս առէպ կը պատահի, պոռաց. Դու այդպիսի մարդ մը այդչափ պզտիկ տուն քեզի կը շինես։ Պատասխանեց Սոկրատ. Երանի՛ թէ այդ ճշմարիտ բարեկամներով լեցուի։

— Շատ մարդիկ բարեկամ կը կոչուին, բայց քիչ են ճշմարիտները։

ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Խառն հոլովմունք

67. *Քանի մը բառերու սեռականն ու գործիականը տարբեր նշանագիր ունին. այս տեսակ բառերուն հոլովմունքը* Խառն *կ'ըսուին։ Օրինակ. Քաղաք—քաղաքի—քաղաքաւ, ընկեր—ընկերի—ընկերաւ, զինուոր—զինուորի—զինուորաւ, բարի—բարւոյ—բարեաւ, տարի—տարւոյ—տարեաւ։*

68. *Սեռականի մէջ ի վերջացող շատ բառեր՝ գործիականի մէջ աւ կը վերջանան։ Օրինակ. Ազգ—ազգի—ազգաւ, քաղաք—քաղաքի—քաղաքաւ, աշակերտ—աշակերտի—աշակերտաւ։*

69. *Ազգ բառը եզակի և յոգնակի այսպէս կը հոլովի.—Եզակի. ազգ, ազգի, ազգի, յազգ, ազգաւ, յազգէ, զազգ. Յոգնակի, ազգք, ազգաց, ազգաց, յազգս, ազգօք, յազգաց, զազգս։*

70. *Սեռականի մէջ ոյ վերջացող շատ բառեր՝ գործիականի մէջ նոյնէն աւ կը վերջանան։ Օրինակ. Բարի—բարւոյ—բարեաւ, տարի—տարւոյ—տարեաւ, սիրելի—սիրելւոյ—սիրելեաւ։*

71. *Բարի բառն այսպէս կը հոլովի.—Եզակի. Բարի, բարւոյ, բարւոյ, 'ի բարի, բարեաւ, 'ի բարւոյ, զ բարի.—Յոգնակի. Բարիք, բարեաց, բարեաց, 'ի բարիս, բարեօք, 'ի բարեաց, զ բարիս։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ.—67. *Ի՞նչ տեսակ բառից հոլովմունքը* ԽԱՌՆ *կ'ըսուին*—68. *Սեռականի մէջ ի վերջացող շատ բառեր գործիականի մէջ ինչ կը վերջանան*—69. *Հոլովէ* ԱԶԳ *բառը*—70. *Սեռականի մէջ ոց վերջացող շատ բառեր գործիականի մէջ ինչ կը վերջանան*—71. *Հոլովէ* ԲԱՐԻ *բառն։*

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. ԱՋԳ բառին պէս հոլովել հետեւեալները։ —

Կարգ, քաղաք, բանակ, ժամանակ, յատակ, պատերազմ, լեզու, խաւար, լաւ, պարգեւ, մեծ, ծնող, երկնաւոր, թագաւոր, փառք, աչք, էգ, բժիշկ, բազում, կեանք, վարագոյր, հովիւ։

Բ. Հոլովել ԲԱՐԻ բառին պէս հետեւեալները։

Այգի, գինի, եկեղեցի, սիրելի, տարի, տեղի, ոսկի, փոշի, որդի, հոգի, աւետիք, կարծիք։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐԻ

Հատուցաց

Վ—Ե—Ն ԵՒ Հ—Ր—Ի—Ն

Վառեակ 'ի խնդիր բոց յաղբեւս՝ յանկարծ մարգարիտ գտեալ, ասէ. « Ո՛վ մեծդ և պատուական, անկեալ յանարգ տեղւոջ. թէ տարփաւոր ոք յարգի քում առատնօր քեզ հանդիպէր, այնուհետեւ յառաջին պայծառութիւնդ դառնայիր. իսկ իմ գտանելս զքեզ՝ որ զբուտ յոյժ առաւել մեծարեմ, ոչ քեզ օգնէ ամենեւին և ոչ ինձ »։

— Զայս այնոցիկ վիպեմ որ չեն հասու իմաստից իմոց։

Թարգմանութիւն

Վ—Ե—Ն — Հ—Ր—Ի—Ն

Վառեակ մը աղբիւսի մէջ իրեն կերակուր փընտռելու ատեն յանկարծ մարգարիտ մը գտնելով կ'ըսէ. « Ո՛վ մեծ և պատուական մարգարիտ, այսպիսի անարդ տեղ մը ինկած. թէ որ զքեզ սիրող մը հոս քեզի հանդիպէր, անկէ ետքը նորէն քու առաջուան պայծառութեանդ կը դառնայիր. բայց իմ զքեզ գտնելս՝ որ ուտելիք մը քեզմէ շատ աւելի կը յարգեմ, ոչ ինծի կ'օգնէ և ոչ քեզ։

— Այս անոնց կը պատմեմ որոնք իմ դիտումս չեն հասկընար։

ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Անական գոյականի հետ

72. Ածական և գոյական բառեր քովէ քով եկած ատեն՝ գրաբառի մէջ սովորաբար գոյականն առաջ կը գրուի, աշխարհաբառի հակառակ։ Օրինակի համար. Գրաբառ կ'ըսենք.

Մանուկ փոքր,	փոխանակ ըսելու՝		Փոքր մանուկ
Ծառ մեծ	»	»	Մեծ ծառ
Բարեկամ հաւատարիմ	»		Հաւատարիմ բարեկամ
Որդի իմաստուն	»	»	Իմաստուն որդի

Ծանօթ. — Ածականներն իրենց գոյականներէն առաջ ալ կրնան գրուիլ, և եթէ միավանկ կամ երկավանկ են՝ իրենց գոյականին հետ թուով ու հոլովով կը համաձայնին. այսինքն՝ գոյականն ինչ թիւ և ինչ հոլով որ ունենայ, ածականն ալ նոյն թուով ու հոլովով կը գրուի։

73. Ծառ մեծ և Մեծ ծառ մէկտեղ կը հոլովին այսպէս.

Եզակի

Ո. Ծառ մեծ	Մեծ ծառ	մեծ ծառ
Ա. Ծառոյ մեծի	Մեծի ծառոյ	մեծ ծառի
Տ. Ծառոյ մեծի,	Մեծի ծառոյ,	մեծ ծառի,
'ի Ծառ մեծ	'ի Մեծ ծառ	— — մէջ
Գ. Ծառով մեծաւ	Մեծաւ ծառով	մեծ ծառով
Բ. 'ի Ծառոյ մեծէ	'ի Մեծէ ծառոյ	մեծ ծառէ
Հ. Ղ Ծառ մեծ	Ղ Մեծ ծառ	մեծ ծառը

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 72. Գրաբառի մէջ ածական ու գոյական բառեր քովէ քով եկած ատեն ո՞րն առաջ կը գրուի — 73. Հոլովէ ԾԱՌ ՄԵԾ և ՄԵԾ ԾԱՌ։

Յոգնակի

Ո. Մառք մեծք	Մեծ ծառք	մեծ ծառեր
Ս. Մառոց մեծաց	Մեծաց ծառոց	մեծ ծառերու
Տ. Մառոց մեծաց,	Մեծաց ծառոց,	մեծ ծառերու,
'ի Մառս մեծս	'ի Մեծ ծառս	— — մէջ
Գ. Մառովք մեծօք	Մեծօք ծառովք	մեծ ծառերով
Բ. 'ի Մառոց մեծաց	'ի Մեծաց ծառոց	մեծ ծառերէ
Հ. զ Մառս մեծս	զ Մեծ ծառս	մեծ ծառերը

Մանօր. — Բազմավանկ ածականները վերջաձայնելու մէջ չեն համաձայնիր երեսց գոյականներուն հետ, և նախադրեալ հոլովելերուն մէջ որն որ նախադասս է՝ ի և զ նախդիրներն անոր վրայ միայն կը դրուին։ Օրինակ. Էջ. — Հաւատարիմ բարեկամ, հաւատարիմ բարեկամի, հաւատարիմ բարեկամի, 'ի հաւատարիմ բարեկամ, հաւատարիմ բարեկամաւ, 'ի հաւատարիմ բարեկամէ, զ հաւատարիմ բարեկամ. — Յոգն. Հաւատարիմ բարեկամք, հաւատարիմ բարեկամաց, հաւատարիմ բարեկամաց, 'ի հաւատարիմ բարեկամս, հաւատարիմ բարեկամօք, 'ի հաւատարիմ բարեկամաց, զ հաւատարիմ բարեկամս։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել ու նշանակել թէ հետեւեալ բառերն ո՞ր հոլովման կը վերաբերին, եւ ըստ այնմ հոլովել։

Ուս, հուր, համբոյր, առաւօտ, զէն, լեզու, խաւար, կեանք, հովիւ, ձեռն, գինի, կարծիք, մեղր, գժոխք, սիրտ, աստեղ, տուն, տեսիլ, ազգր, աղբիւր, եղջ, գաւրուն, Մարիամ։

Բ. Հետեւեալ քովէ քով դրուած գոյական եւ ածականն բառերն մէկտեղ հոլովել։

Այր լաւ, խմաստուն բարեկամ, տուրբ եկեղեցի, հոգի բարի, տուն մեծ, աստղ երկնային, մանր մանուկ, Եսայի մարգարէ, սպիտակ ձիւն, լեառն բարձր, բժիշկ ճարտար։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուած

Աչքեր գոհարէն ի կոց

Աղուէս ետես զաքլոր՝ մինչ բարձր 'ի գլուխ դեսպակաւ բարձեալ բերէր 'ի կատուոց, և զայս խրատ մատոյց նմա. Զգուշացիր 'ի դաւոյ, ո՛վ հէգդ հաւիկ, զի զէմք գոցա աւարառուաց թուին զէմք քան բեռնակրաց։ Ապա այն ինչ քաղցեաւ ժողովն վայրագ, յօշեալ բաժինս արար աւարին զվերելեակն։

Թարգմանութիւն

Կոգոնների ձայնին ընդունող աչքեր

Աղուէսը տեսաւ զաքաղաղն որ գլուխը բարձր բռնած պատգարակով (թախտիրէվան) կատուներէն կը տարուէր, և անոր այս խրատը տուաւ. Զգոյշ կեցիր, ո՛վ ողորմելի հաւ, վասն զի ատոնց դէմքերն աւելի յափշտակողներու դէմք կը նմանին՝ քան թէ բեռնակրաց։ Յետոյ վայրենի խումբն հագիւ թէ անօթեցաւ, վերը կեցողը պատռեց և աւարի տեղ բաժնեց։

ԵՕԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Յատկացուցիչ և Յատկացեալ

74. Սեռական հոլովն՝ որ անձի կամ բանի մը որոն ըլլալը կ'իմացընէ, Յատկացուցիչ կ'ըսուի։ Օրինակ. Որդի, հրամանն, գրիչ. — Որոն որդին, որոն հրամանը, որոն գրիչն ըլլալն իմացընելու համար այս բառերուն քով մէկմէկ սեռական բառ կը դնենք ու կ'ըսենք Աղամայ որդին, Աստուծոյ հրամանը, Պողոսի գրիչը։ Աղամայ, Աստուծոյ, Պողոսի բառերն Յատկացուցիչ կ'ըսուին։

75. Այն բառն՝ զոր յատկացուցիչը կ'իմացընէ թէ որոն կը վերաբերի՝ Յատկացեալ կ'ըսուի։ Այսպէս. Աղամայ որդին, Աստուծոյ հրամանը, Պողոսին գրիչը. — Հոս յատկացեալն են որդին, հրամանը, գրիչը։

76. Գրաբարի մէջ Յատկացուցիչն՝ Յատկացեալէն առաջ կը գրուի, աշխարհաբարի հակառակ։ Այսպէս կ'ըսենք. Որդին Աղամայ, հրամանն Աստուծոյ, գրիչն Պողոսի։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել ու նշանակել հետեւեալ զոյգ զոյգ բառերուն մէջ՝ թէ ո՞րն է յատկացուցիչ եւ ո՞րն է յատկացեալ։

Որդի Դաւթի, ծառայ Աստուծոյ, որդի մարդոյ, արքութիւնք քոյ, բանակքն Մադիամու, բնակարան հոգւոյն, տեղի բնակութեան, ապարանք արքայի, հրաման թագաւորի, տէր մեր, հրեշտակք երկնից, անդունդք դժոխոց, երկիր Նեփթաղիմայ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 74. Սեռական հոլովն ինչ կ'ըսուի — 75. Ո՞ր բառն ՅԱՏԿԱՑԵԱԼ կ'ըսուի — 76. Գրաբարի մէջ ո՞րն առաջ կը գրուի. Յատկացուցիչը թէ Յատկացեալը։

Բ. Հետեւեալ քովէ քով դրուած բառերէն մէկը սեռական յատկացուցիչ ընել եւ դասաւորել ըստ պատշաճի։

Գործք առաքելոց, մարգարէութիւնք Եսայի, շուշան հովիտ, դաշտ ծաղիկ, հայր Պետրոս, ծաղկունք երկինք, վրանք Մովսէս, ծաղիկ վարդ, վարդ սուրբք, հարք վարդ, իմաստութիւն Սողոմոն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցանել

Մ-ՐԴ Ա 03

Ոմն ընդդէմ անձին գըթութեան առնելով՝ բարձեալ զիժ կարկամեալ 'ի ցրտոյ, տաժէր 'ի ծոցի։ Նա՝ այն ինչ ոգեբերեալ, սպան զայրն։ Եւ մինչ այլ ոք յօձից հարցանէր զնա թէ առ իմէ՞ սպան զբարեբարն, ասէ. Զի մի՛ ոք ուսցի բարեխնամող գոլ չարին։

— Որ ոք նպաստ ինչ մատուցանէ չարին՝ հուպ ընդ հուպ սարսանայ։

Թարգմանուշքիւն

Մ-ՐԴՆ — 03Ը

Մէկն իւր անձին գթութեան դէմ ընելով՝ ցրտէն կծկած օձ մը քոլն առած ծոցին մէջ կը խնամէր։ Անիկայ հազիւ թէ ողջընեալ սկսաւ՝ մարդը սպաննեց։ Եւ երբ ուրիշ օձ մը հարցուց իրեն թէ ինչո՞ւ բարեբարդ սպաննեցիր, ըսաւ. Որպէս զի մէկը չարին բարիք ընել չսովրի։

— Ով որ չարին օգնութիւն մը կ'ընէ՝ կը զըղջայ չուտով։

ԱՒԹԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Էական դերանուն

77. Դերանուն *կ'ըսուին այն բառերն որ անուններուն տեղ կը դրուին։*

78. *Հինգ տեսակ դերանուն կայ.* Էական, Ցուցական, Ստացական, Յարաբերական, Անորոշ։

79. *Էական դերանուններն երեք հատ են.* Ես, Դու, Ինքն *կամ* Իր։ *Ես կ'ըսուի Առաջին դէմք, որ է խօսող անձը. Դու կ'ըսուի Երկրորդ դէմք որ է լսող անձը. Ինքն կամ Իր կ'ըսուի Երրորդ դէմք, որ է թէ խօսողէն և թէ լսողէն հեռու գտնուող անձը։*

80. *Ես էական դերանունն այսպէս կը հոլովի.*

Եզակի		*Յոգնակի*	
Ո. Ես	*ես*	Մեք	*մենք*
Ս. Իմ	*իմ*	Մեր	*մեր*
Տ. Ինձ, յիս	*ինձի*	Մեզ, 'ի մեզ	*մեզի*
Գ. Ինձ	*ինձմով*	Մեզ	*մեզմով*
Բ. Յինէն	*ինձմէ*	'ի Մէնջ	*մեզմէ*
Հ. Ղիս	*իս*	Ղ Մեզ	*մեզ*

81. *Դու էական դերանունն այսպէս կը հոլովի.*

Եզակի		*Յոգնակի*	
Ո. Դու	*դու*	Դուք	*դուք*
Ս. Քո	*քո*	Ձեր	*ձեր*
Տ. Քեզ, 'ի քեզ	*քեզի*	Ձեզ, 'ի ձեզ	*ձեզի*
Գ. Քեզ	*քեզմով*	Ձեզ	*ձեզմով*
Բ. 'ի Քէն	*քեզմէ*	'ի Ձէնջ	*ձեզմէ*
Հ. Ղ Քեզ	*քեզ*	Ղ Ձեզ	*ձեզ*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 77. *Ո՞ր բառերը ԴԵՐԱՆՈՒՆ կ'ըսուին* – 78. *Քանի՞ տեսակ դերանուն կայ և որո՞նք են* – 79. *Քանի՞ և որո՞նք են ԷԱԿԱՆ դերանունները* – 80. *Հոլովէ՛ ԵՍ դերանունը* – 81. *Հոլովէ՛ ԴՈՒ դերանունը։*

82. Ինքն և իւր էական դերանունները այսպէս կը հոլովին.

Եզակի		Յոգնակի	
Ա. Ինքն	ինք, ինքը	Ինքեանք	իրենք
Ա. Ինքեան	իրեն	Ինքեանց	իրենց
Տ. Ինքեան, յինքն	իրեն	Ինքեանց, յինքեանս	իրենց
Գ. Ինքեամբ	իրմով	Ինքեամբք	իրենցմով
Բ. Յինքենէ	իրմէ	Յինքեանց	իրենցմէ
Հ. Զինքն	ինքը զինքը	Զինքեանս	իրենք զիրենք

Եզակի	
Ա. —	—
Ա. Իւր իւրեան	իրեն, իր
Տ. Իւր իւրեան յիւր	իրեն
Գ. Իւրեամ, իւրեաւ, իւրեամբ	իրմով
Բ. Յիւրմէ	իրմէ
Հ. —	—

Յոգնակի	
Ա. Իւրեանք	իրենք
Ա. Իւրեանց	իրենց
Տ. Իւրեանց, յիւրեանս	իրենց
Գ. Իւրեամբք	իրենցմով
Բ. Յիւրեանց	իրենցմէ
Հ. Զիւրեանս	իրենք, զիրենք

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Որոշել ու նշանակել հետեւեալ դերանունաց դէմքն, թիւն ու հոլովն՝ իւրաքանչիւրին նշանակութեամբ հանդերձ։

Զիս, ինքն, զքեզ, 'ի մէնջ, զձեզ, յինքենէ, ես, քո, դու, զմեզ, ձեր, ինքեամբ, ինև, մեր, ձեզք, դուք, քեզ,

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 82. Հոլովէ ԻՆՔՆ կամ ԻՒՐ։

ինքեանց, 'ի ձէնջ, 'ի ձեզ, յինքեանս, 'ի քէն, քեզ, 'ի մեզ, ինձ, իմ, յիս, ձեզ, ինքեան, յինէն, մեք, մեզ, ինքեանք, մեաք, զինքեանս։

ԳԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցած

Բ—ՒՇ—Ի Ա ԸՆԿԵՐ Է—Ր

Բուիճակ հարցեալ զընկեր իւր ձայնէ նմա թէ Կա՞ս. իսկ նա ասէ. Կամ, և ոչ կայ. այլ թեւածեալ գնայ այլուր։ Ապա հաւն գիշերային էառ կոչումն Կ—Ա—Ղ—Ռ։

— Որ ինչ զք 'ի շրթանց ևեթ խոստանայ, իմա ըզխոստումն նորա ոչ ինչ ընդհատ 'ի խոստմանէ բուիճակին։

Թարգմանուած

Բ— Ղ—Ա—ՆՆ Ա Է ԸՆԿԵՐԸ

Բու մը իր ընկերը կանչելով անոր ձայն կու տայ թէ Կա՞ս. իսկ նա, Կամ կ'ըսէ, և չկայ, այլ թռչելով ուրիշ տեղ կ'երթայ։ Ապէ գիշերուան թռչունը Կ—Ա—Ղ—Ռ կոչուեցաւ։

— Ով որ բան մը բերնով միայն կը խոստանայ, անոր խոստումը բուին խոստումէն տարբեր մի՛ համարիր։

ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴԱՍ

Ցուցական դերանուն

83. Ցուցական դերանուններն սառնք են. Սա, Սոյն, Այս, — Դա, Դոյն, Այդ, — Նա, Նոյն, Այն, *որ կը նշանակեն՝ սա, սա, ան։*

84. Սա ցուցական դերանունն այսպէս կը հոլովի.

Եզակի		Յոգնակի	
Ո. Սա	սա	Սոքա	սառնք
Ս. Սորա	սառ	Սոցա	սառնց
Տ. Սորա, 'Ի Սա	սառ	Սոցա, 'Ի Սոսա	սառնց
Գ. Սովաւ	սառվ	Սոքոք	սառնցմով
Բ. 'Ի Սմանէ	սակէ	'Ի Սոցանէ	սառնցմէ
Հ. Զ Սա	սա	Զ Սոսա	սառնք

Դա և Նա դերանուններն ալ ճիշտ այսպէս կը հոլովին։

85. Սոյն ցուցական դերանունն այսպէս կը հոլովի.

Եզակի	
Ո. Սոյն	սա, սոյն
Ս. Սորին, սորուն	սառ
Տ. Սորին, 'Ի սոյն	սառ
Գ. Սովին, սովիմբ	սառվ
Բ. —	—
Հ. Զ Սոյն	սա

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 83. *Որոշք են ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՆ* — 84. *Հոլովէ ՍԱ, ԴԱ, ՆԱ դերանունները* — 85. *Հոլովէ ՍՈՅՆ, ԴՈՅՆ, ՆՈՅՆ դերանունները։*

Յոգնակի

Ո. Այնք, սոքին	սոնք
Ս. Սոցին, սոցուն, սոցունց	սոնց
Տ. Սոցին, սոցուն, սոցունց 'Ի սոյնս, 'Ի սոսին	սոնց
Գ. Սով/մբք, սոքիմբք, սոքումբք	սոնցմով
Բ. 'Ի Սոցունց	սոնցմէ
Հ. Զ Սոյնս, զսոսին	սոնք

Դոյն և Նոյն դերանուններն ալ ճիշդ սանկ կը հոլովին։

86. Այս ցուցական դերանունն այսպէս կը հոլովի.

Եզակի

Ո. Այս	աս
Ս. Այսր, այսորիկ	սոր
Տ. Այսմ, այսմիկ, յայս	սոր
Գ. Այսու, այսուիկ	սով
Բ. յԱյսմանէ	սակէ
Հ. Զ Այս	աս

Յոգնակի

Ո. Այսք, այսոքիկ	սոնք
Ս. Այսց, այսոցիկ	սոնց
Տ. Այսց, այսոցիկ, յայսս, յայսոսիկ	սոնց
Գ. Այսոքիւք, այսոքիմբք	սոնցմով
Բ. յԱյսց, յայսոցանէ, յայսոցիկ	սոնցմէ
Հ. Զ Այսս, զայսոսիկ	սոնք

Այդ և Այն դերանուններն ալ այսպէս կը հոլովին։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 86. Հոլովէ ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ դերանունները։

Ծանօթ. — **Այս, Այդ, Այն** ածականաբար գոյականի հետ կը բանին, և թուով ու հոլովով անոր հետ կը համաձայնին։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել ու նշանակել հետեւեալ ցուցական դերանունաց հոլովը, թիւն ու նշանակութիւնը։

Այնքիւք, յայնց, զայդ, այսմիկ, այնմ, այսորիկ, այդմ, զայս, այնորիկ, յայս, այսու, այսմ, այնուիկ, զայնոսիկ, այնոր, յայդ, այն, այդր, յայսցանէ, այդոքիւք, այնու, յայնոցիկ, յայդմ, յայդոսիկ, այդու։

Բ. Հոլովել հետեւեալ ցուցականները քովի բառերովն հանդերձ։

Այս այր, այդ առն, քաղաքն այն, լեառնս այս, այդ նշան, այս վէմ, եկեղեցին այն, այս ծառ, ամիսն այն, այն տարի, այդ գիւղ, երկիրդ այդ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Վարուն և -նէ

Ի պարտիզէ հատեալ վարունկ 'ի ճաշակ երախայրի, 'ի խնամանն ընդ առամամբ կերծղի, որպէս զաղնիւս 'ի մրգաց՝ պանծայր ընդ համ իւր և ընդ հոտ։

Այլ ստգտեալ 'ի սեխէ՝ չև 'ի վերբ երևեալ ձրմերկի և քաղցրահամ պըտղոց, այնուհետև յանհամ դդմենիս ևեթ իշխէ պարծել։

— Ա՛ 'ի չգոյէ կատարելոց՝ մեծարանս զոսանեն թերիք։

Թարգմանութիւն

Վարունկ և -նէն

Վարունկ մը (խիար) պարտիզէն առաջին անգամ ուտելու համար քաղուելով, կերծղին ակռաներուն տակ ձայն հանած առնելի՝ իրրև թէ ազնիւ պտուղներէն մէկն է իր համին և հոտին վրայ կը պարծէր։ Բայց ձմերուկին և ուրիշ քաղցրահամ պտուղներուն երևնալէն առաջ սեխէն յանդիմանուելով, անկէ ետքը միայն անհամ դդմենիներու մէջ կը համարձակի պարծիլ։

— Կատարեալներուն չեղած առնն՝ անկատարները բանի տեղ կը դրուին։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Ստացական դերանուն

87. *Ստացական դերանուն կ'ըսուին* Իմ, Քո, Իւր, Մեր, Ձեր, Սորա, Դորա, Նորա, *որոնք նախընթաց էական և յուցական դերանուանց սեռականներն են։*

88. *Ստացական դերանուններն առանձին հոլովում չունին, այլ կանոնաւոր կերպով կը հոլովին չորրորդ հոլովման բառից պէս։ Օրինակ.* Իմ—Իմոյ—Իմով—Իմք—Իմոց—Իմովք, Քո—Քոյոյ—Քոյով—Քոյք—Քոյոց—Քոյովք, Իւր—Իւրոյ—Իւրով—Իւրք—Իւրոց—Իւրովք, Մեր—Մերոյ—Մերով, Ձեր—Ձերոյ, Սորա—Սորայոյ, Դորա—Դորայոյ, Նորա—Նորայոյ։

89. Իմ, Քո, Իւր, Մեր, Ձեր *ածականաբար գոյականի հետ կը բանին թէ առաջ թէ ետքը, և թուով ու հոլովով անոր հետ կը համաձայնին։ Օրինակ.* Եղբայր Իմ, Եղբօր Իմոյ, Եղբարք Իմով, յեղբօրէ Իմմէ, զեղբայր Իմ, Եղբարք Իմ, Եղբարց Իմոց, Եղբարքք Իմովք, զեղբարս Իմ, *են։*

90. Քո *դերանունն երկրորդ ձև մ'ալ ունի որ ամփոփեալ կ'ըսուի։ Գոյականէն ետքը դրուած ատեն սոյն ձևով կը հոլովի, և առաջ դրուած ատեն՝ վերի սովորական ձևով։ Երկու ձևերուն ալ օրինակը դնենք.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 87. ՍՏԱՑԱԿԱՆ *դերանուն որոնք կ'ըսուին* — 88. *Ստացական դերանունները ինչպէս կը հոլովին* — 89. ԻՄ, ՔՈ, ԻՒՐ, ՄԵՐ, ՁԵՐ *գոյականի հետ գտնուած ատեն ինչպէս կը բանին* — 90. ՔՈ *դերանունն ուրիշ ինչ ձև ունի. հոլովէ երկու ձևերն ալ գոյականով։*

Եզակի

Ո. Հրաման քո	Քո հրաման	քու հրամանդ
Ս. Հրամանի քոյ	Քոյոյ հրամանի	քու հրամանիդ
Տ. Հրամանի քուս	Քոյոյ հրամանի	քու հրամանիդ
Գ. Հրամանաւ քով	Քոյով հրամանաւ	քու հրամանովդ
Բ. 'Ի Հրամանէ քումմէ	'Ի Քոյոյ հրամանէ	քու հրամանէդ
Հ. Ղ Հրաման քո	Ղ Քո հրաման	քու հրամանդ

Յոգնակի

Ո. Հրամանք քո	Քո հրամանք	քու հրամաններդ
Ս. Հրամանաց քոց	Քոյոց հրամանաց	քու հրամաններուդ
Տ. Հրամանաց քոց	Քոյոց հրամանաց	քու հրամաններուդ
Գ. Հրամանաք քովք	Քոյովք հրամանաք	քու հրամաններովդ
Բ. 'Ի Հրամանաց քոց	'Ի Քոյոց հրամանաց	քու հրամաններէդ
Հ. Ղ Հրամանս քո	Ղ Քո հրամանս	քու հրամաններդ

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Հոլովել հետեւեալ ստացական դերանուններն իրենց գոյականներով։

Որդի իմ, պարտէզ մեր, տուն իւր, այգի ձեր, ոտք քո, թագաւոր մեր, եղբայր ձեր, աղգ քո, մանուկ իմ, անուն քո սուրբ, հայր մեր երկնաւոր։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Ա—զակ Ե ։—ահանայ

Քահանայ ոմն արի և հուժկու բազկաւ՝ երբեմն յանկարծ յաւազակէ ըմբռնեալ, կորզեաց զսուրն 'ի ձեռանէ ոսոխին, և զնա զհետ առեալ ձգէր ուժգնապիրկ։ Յայնժամ գողն սկսաւ աղաչել զնա և ասել. Խնա-

Թարգմանութիւն

Գողն — ։—ահանայն

Ասենք քաջ և ուժով քահանայ մը յանկարծակի աւազակէ բռնուելով՝ թշնամւոյն ձեռքէն սուրն յափշտակեց և զինքը ետևէն ուժով քաշքըռտելով կը տանէր։ Այն ատեն գողն սկսաւ աղաչել ու ըսել. Խը-

յեա յիս՝ դու որ հանապազ 'ի բեմին «Խաղաղութիւն ամենեցուն» քարոզես։ Քահանայն «Խաղաղութիւն արդարութեամբ յաջողէ» ասելով՝ ած աւանդեաց ըզնա ատենի սուսերքն հանդերձ։

— Այր չարագործ յանիրաւի բարիս յայլոց պահանջէ։

նայէ ինձի, դու որ ամէն օր խոբանին վրայ «Խաղաղութիւն ամենեցուն» կը քարոզես։ Իսկ քահանայն «Խաղաղութիւնն արդարութեամբ կը յաջողի» ըսելով՝ զինքը սրովը մէկտեղ տարաւ ատենին յանձնեց։

— Չարագործ մարդն անիրաւ տեղ ուրիշներէն բարիք կը պահանջէ։

ԲԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Յարաբերական դերանուն

91. Յարաբերական դերանուն կ'ըսուին Որ և Ո։

92. Անոնք յարաբերական՝ այսինքն վերաբերութիւն ունեցող դերանուն կ'ըսուին, վասն զի առաջուց ըսուած բառի մը տեղ կը գրուին՝ որն որ յարաբերեալ կ'ըսուի։ Օրինակ. Սիրելի է մանուշակ որ ուսանի զդաս իւր, սիրելի է այն տղան որ դասը կը սորվի. Ես գտի ընդ-գրիչն զոր դու կորուսեր, կորուսած գրիչդ ես գտայ. — այս խօսքերուն մէջ որ և զոր յարաբերական են, և մանուշակ, զգրիչ՝ յարաբերեալ։

93. Որ յարաբերականը չորրորդ հոլովման համեմատ կը հոլովի այսպէս.

Եզ. Որ, որոյ, որուամ՝ յոր, որով, յորմէ կամ՝ յորոյ, զոր. Յոգ. Որք, որոց, որոց՝ յորոց, որովք, յորոց, զորս։

Ծանօթ. — Որ հարցական խմաստով գոյականի առջև կը գրուի և ածականի պէս անոր հետ կը համաձայնի. ինչպէս Որ լեզու, որոյ քաղաքի, յորմէ՞ աշխարհէ, զո՞ր հրաման, ո՞ր լեզուք, որո՞ց քաղաքաց, յորո՞ց աշխարհաց, զո՞ր հրամանս, որո՞վ իշխանութեամբ, որո՞վք երեսոք, ևն։

94. Ո իբրև գոյական առանձին կը բանի սովորաբար հարցական մտքով, և կը հոլովի այսպէս.

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 91. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ դերանուն որո՞նք կ'ըսուին — 92. Ինչո՞ւ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ կ'ըսուին այս դերանուանք և ի՞նչ է ՅԱՐԱԲԵՐԵԱԼ — 93. Հոլովէ ՈՐ դերանունն — 94 Ի՞նչպէս կը բանի Ո դերանունն և ինչպէս կը հոլովի։

Եզակի		Յոգնակի	
Ո. Ո՞	ո՞վ	ՈՅՔ	որո՞նք
Ս. ՈՅՐ	որո՞ւն	ՈՅՑ	որո՞նց
Տ. Ո՞ՒՄ, ՅՈ՞Ւ	որի՞ն, – վրայ	ՈՅՑ, ՅՈՅՍ	որո՞նց, – վրայ
Գ. (չունի)	—	—	—
Բ. ՅՈՒՄՄԷ՞	որմէ՞	ՅՈՅՑ	որոնցմէ՞
Հ. ԶՈ՞Ւ	զո՞վ	ԶՈՅՍ	զորո՞նք

Ծանօթ. — Ս, Գ, Ն գրերն յօդ կ'ըսուին և բառից ծայրը գրուելով անոնց նշանակութիւնը կ'որոշեն. ինչպէս՝ մարդն, բանքս, ձեռնդ։ Յարաբերական դերանուանց ծայրն յօդ չի գրուիր։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հետեւեալ խօսքերուն մէջ որոշել ու նշանակել յարաբերականն ու յարաբերեալը։

Ո՞ւր է արքայն Հրէից որ ծնաւ. Զայնն զոր լուայ. Ես որ խօսիմ. Դու որ լսես. Մարիամ յորմէ ծնաւ Յիսուս. Բանն որով երկինք հաստատեցան. Պաշտօնեայքն՝ որոյք հաւատացին։

Բ. Հոլովել հետեւեալ բառերն իրենց Ո՞Ր հարցականին հետ։

Ո՞ր այր, ո՞ր տուն, ո՞ր քաղաք, ո՞ր ազգ, ո՞ր ծով, ո՞ր աստղ, ո՞ր ժողովուրդ, ո՞ր մարդ, ո՞ր ձեռն, ո՞ր անձն, ո՞ր լուր, ո՞ր վարագոյր, ո՞ր պատիժ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Ե--վդ Ա -ոՒՄ-Ն

Ատամակ ոմն եհար քարամբ զԵստվղոս. իսկ նա տուեալ նմա դանակ « Կեցցես » ասէ, և յաւելու. « Աւելի ինչ ոչ ունիմ, բայց ուսուցից քեզ թէ ուստի

Թարգմանութիւն

Ե--վդ Ա -ՆԿ-ՐՔ ՄԱՐԴ ՄԸ

Անկարգ մարդ մը քարով Եզովբոսին զարկաւ. իսկ նա դանակ մը տալով « Ապրիս » ըսաւ, և աւելցուց. « Ակէ աւելի չունիմ, բայց քեզի սորվեցը-

մարթ է առնուլ. ահա փարթամ և հզօր ոք հասեալ գայ, նոյնպէս զնա հարքարիւ, և ընդունիցիս ըզփոխարէնն արժանի »։ Նա հաւանեցաւ և արար ըստ խրատուն. այլ պատրեաց յոյս զյանդգնութիւնն ժըպիրհ, քանզի 'ի պատուհաս ածեալ՝ կախաղանաւ եւ վրէժ։

— Յաջողութիւն զբաղումս հրապուրէ 'ի վնաս։

նեմ թէ ուստի՞ կարելի է առնել. ահա հարուստ և ուժով մէկը կու գայ, նոյնպէս իրեն ալ քարով զարկ, և արժանաւոր վարձքդ կ'առնուս »։ Նա համոզուեցաւ ու խրատին համեմատ գործեց. բայց յոյսն իր լիրբ յանդգնութիւնը խաբեց. վասն զի պատժելու տարուելով կախաղանով ըրածին փոխարէնը գտաւ։

— Յաջողութիւնը շատերը չարիք ընելու կը գրգռէ։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Անորիշ դերանուն

95. Անորիշ դերանուն կ'ըսուին քանի մը բառեր որ անորոշ նշանակութիւն մ'ունին։

96. Գլխաւոր անորիշ դերանուններն սոսկք են. Ոմն, Ոք, մէկը, ան մը. Իմն կամ Ինչ, մը կամ բան մը, և Զինչ, որ ըսել է ի՞նչ բան։

Ծանօթ. – Ոմն և Ոք միայն անձի համար կը գործածուին թէ առանձին և թէ գոյականով. Իմն կամ Ինչ միայն անշունչ իրաց տեղ կը գործածուի, բայց միշտ ածականաբար գոյականի հետ։

97. Ոմն և Ոք առանձին և գոյականի հետ այսպէս կը հոլովին.

Եզակի

(Ա—ՆՅԻՆ)

Ո. Ոմն,	Ոք	(մարդուն)	մէկը
Ս. Ուրուն,	Ուրուք		մէկուն
Տ. Ումեմն, յՈմն,	Ումեք, յՈք		մէկին, –վրայ
Գ. Ոմամբ,	(զունի)		մէկով
Բ. յՈմեմնէ,	յՈմեքէ		մէկէն
Հ. զՈմն,	զՈք		մէկը

(Գոյականի հետ)

Ո. Ինչ ոմն, ոք	ինչ (մարդ) մը
Ս. Ինչոյ ուրուն, ուրուք	ինչ ու մը
Տ. Ինչոյ ումեմն, ումեք	ինչու մը
Գ. Ինչով ոմամբ	ինչով մը
Բ. Ի Ինչոյ ումեմնէ, ումեքէ	ինչէ մը
Հ. զԻնչ ոմն, ոք	ինչ մը

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 95. Ո՞ր բառերն ԱՆՈՐԻՇ դերանուն կ'ըսուին – 96. Ըսէ գլխաւոր անորիշ դերանուններն – 97. Հոլովէ ՈՄՆ և ՈՔ առանձին ու գոյականով։

Յոգնական (երկուքն ալ մէկ ձև ունին)

(Ա—ՆՅՈՒ)

Ո. Ոմանք	քանի մը հոգի
Ս. Ոմանց	» » հոգիներու
Տ. Ոմանց, յՈմանս	» » հոգիներու, — մէջ
Գ. Ոմամբք	» » հոգիներով
Բ. յՈմանց	» » հոգիներէ
Հ. զՈմանս	» » հոգիները

(ԳՈՅԱԿԱՆ ՀԵՏ)

Ո. Ծերք ոմանք	քանի մը ծերեր
Ս. Ծերոց ոմանց	» » ծերերու
Տ. Ծերոց ոմանց	» » ծերերու
Գ. Ծերովք ոմամբք	» » ծերերով
Բ. 'ի Ծերոց ոմանց	» » ծերերէ
Հ. զ Ծերս ոմանս	» » ծերերը

98. *Իմն կամ ինչ ուրիշ բառի հետ կը հոլովի, և յոգնական՝ ամէն հոլովի տեղ իմն կամ ինչ կը մնայ, այսպէս.*

Եզական

(Ա—ՆՅՈՒ)

Ո. Իմն կամ ինչ	բան մը
Ս. Իրիք	բանի մը
Տ. Իմիք, յիմն կամ յինչ	բանի մը, — մէջ
Գ. Իւիք	բանով մը
Բ. յիմէքէ	բանէ մը
Հ. Իմն կամ ինչ	բան մը

(ԳՈՅԱԿԱՆ ՀԵՏ)

Ո. Գործ իմն, ինչ	գործ մը
Ս. Գործոյ իրիք	գործի մը
Տ. Գործոյ իմիք, 'ի Գործ իմն, ինչ	գործի մը, — մէջ
Գ. Գործով իւիք	գործով մը
Բ. 'ի Գործոյ իմէքէ	գործէ մը
Հ. զԳործ իմն, ինչ	գործ մը

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 98. *Ինչպէս կը հոլովի ԻՄՆ կամ ԻՆՉ առանձին ու գոյականի հետ:*

Յոգնական

Ո. Գործք Ս. Գործոց Տ. Գործոց, 'Ի Գործս Գ. Գործովք Բ. 'Ի Գործոց Հ. զԳործս	Իմն, Ինչ

99. Զի՞նչ թէ առանձին և թէ Զի՞նչ ինչ մէկտեղ կը հոլովի եզակի միայն, այսպէս.

Ո. Զինչ	Զինչ ինչ	ինչ բան
Ս. Է՞ր	Է՞ր իրք	ինչ բանի
Տ. Ի՞մ կամ Հիմ 'Յինչ	Ի՞մ իմիք 'Յինչ	ինչ բանի — մէջ
Գ. Ի՞ւ	Ի՞ւ իւիք	ինչ բանով
Բ. Յիմէ՞	Յիմէ՞ իմիքէ	ինչ բանէ
Հ. Զինչ	Զինչ ինչ	ինչ բան

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հոլովել հետեւեալ անորիշ դերանուններն իրենց գոյականներուն հետ։

Կայր ոմն, մեծ իմն, այս ինչ, ծառայ ոք, քահանայ ոք, մարգարէ ոմն, մեծատուն ոք, տեղի ինչ։

Բ. Հետեւեալ գոյականով եւ առանց գոյականի հոլոված անորիշ դերանուանց հոլովը, թիւն ու նշանակութիւնն որոշել։

Ի՞ւ իւիք, յինչ, արամբ ոմամբ, յանցանաց ինչ, ծառայի ուրումն, ժողովրդեան ուրուք, զբաղմամբ իւիք, յոմանց ծանօթից, զինչ ինչ, ոք, յիմէ՞, հիմ, զբարեկամս ոմանս, ուրումն քաղաքացւոյ, օրինակաւ իւիք, իւիք իւիք, իմ իմիք։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 99. *Ինչպէս կը հոլովին Զինչ և Զինչ ինչ դերանուններն։*

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցած

Դոյզն և դոյզն

Զկնորաք երկու 'ի միասին կալան ոստրէ մի ըստուար. մին պահանջէր զայն՝ զի նախ իւր էր տեսեալ, միւսն՝ զի ինքն փութացեալ կալեալ էր զայն։

Վէճն 'ի յատեան ածաւ, և տուաւ ժիժմակն յաւանդ դատողին։ Արդ մինչ դատախազք երկուստեք վիճէին, նա եկեր զպարարակ միջուկ խեցւոյն, և ըզմին 'ի խեփորիցն միւսմ վճռեալ՝ զմիւսն ետ միւսում։

— Ընտրելագոյն է իրաւախոհ լինել յոռի պայմանաւ քան վիճել յատենի։

Թարգմանուած

Դոյզնէ բաղդնէր և դոյզն մը

Երկու ձկնորսներ միատեղ խոշոր ոստրէ մը բռնեցին. մէկը զայն կը պահանջէր՝ վասն զի նախ ինքը տեսած էր, և միւսը՝ վասն զի ինքը փութալով բռնած էր։

Վէճը դատաստանի հանուեցաւ և ժիժմակը դատաւորին տրուեցաւ որ պահէ։ Արդ մինչդեռ դատ բացողները կը վիճէին, նա խեցին պարարտ միջուկն ուտելով, կճեպներէն մէկ հատը մէկուն տուաւ և մէկալը միւսին։

— Լաւ է գէշ պայմանով համաձայնիլ՝ քան թէ դատաստանի մէջ վիճել։

ՔԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Բայի սահման ու գլխաւոր պարագաներն

100. Բայը բառ մ'է որ բան մ'ըլլալ կամ բան մ'ընել կը նշանակէ։ Օրինակ. Հայրդ հարուստ է, Եղբայրդ լացաւ, Ես կը գրեմ, Դուք պիտի սորվիք։

101. Բայերն անուանց և դերանուանց պէս այլ և այլ ձևեր կ'առնեն խօսակցութեան և գրութեան մէջ, որ Լծորդութիւն կամ Խոնարհում կ'ըսուի. բայ մը խոնարհել կամ լծորդել ըսել է նոյն բային ամէն ձևերը զուրցել։ Օրինակ. Ես եմ, դու գրեցեր, նա սիրէ։

102. Բայերն էական դերանուանց երեք դէմքով կը խոնարհին թէ եզակի և թէ յոգնակի։ Օրինակ. Ես խօսիմ, դուն ըսես, նա գրէ. մենք խօսիմք, դուք ըսէք, ինքեանք գրեն։

Ծանօթ. – Այս էական դերանուններն ամէն անգամ նիւթապէս չեն գրուիր բայերուն քով, բայց միշտ զօրութեամբ կ'իմացուին, ինչպէս աշխարհաբառի մէջ ալ կը խօսիմ, կը ըսես, կը գրէ կ'ըսենք, և կը հասկնանք՝ ես կը խօսիմ, դուն կը ըսես, ինքը կը գրէ։

103. Արմատ կ'ըսուի բայերուն առաջին կատարն որ խոնարհելու ժամանակ չի փոխուիր. իսկ մնացած փոփոխութիւն ընդունող մասը Վերջաւորութիւն կ'ըսուի։ Օրինակ. Կարդ–ամ, կարդ–աս, կարդ–ալ, կարդ–ամք, կարդ–այք, կարդ–ան։ – Հաշատ–ամ, հաշատ–ացի, հաշատ–ացէք, են։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 100. *Բայն ինչ է և ինչ կը նշանակէ* – 101. *Բայերուն մէջ Լծորդութիւն կամ խոնարհում ըսելով ինչ կ'իմացուի* – 102. *Բայերը դէմքով ու թուով ինչպէս կը խոնարհին* – 103. *Ի՞նչ կը հասկցուի բայի մը Արմատ ու Վերջաւորութիւն ըսելով։*

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Որոշել ու նշանակել հետեւեալ խօսքերուն մէջ անունները, դերանունները ու բայերը։

Այր ոմն ասէ. Սա է արքայն Հրէից. Դու ասես թէ թագաւոր եմ. Լուսաք զդորա խօսել բանս հայհոյութեան. Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ. Որ ոք իցէ անզգամ՝ եկեսցէ առ իս։

Բ. Հետեւեալ բայից սկիզբը պատշաճ դէմքեր դնել եւ գտնել արմատները վերջաւորութիւններէն։

Կոտորէիր (կը ջ-ր-դ-էիր), *արձակեցից* (դէպ-ի -ր-ձ-կէ-ց), *ծնծէին* (կը ծ-ն-ծ-էին), *արա* (ը-ր-է), *եկեսցէ* (դէպ-ի է-ս-ց), *լուայ* (լ-ո-ա-յ), *ժողովեմ* (կը ժ-ո-ղ-վ-ե-մ), *գրեսջիր* (գ-ր-ե-ս-ջ-ի-ր), *ընթեռնուցուն* (-ր կ-ո-ր-դ-ե-ն), *սիրեսցուք* (-ի-ր-ե-ս-ց-ո-ւ-ք), *բառնայցեմ* (-ր վ-ե-ր-ց-ն-ե-մ), *հոգացայ* (հ-ո-գ-ա-ց-ի), *լիցին* (ն-ա-ղ ը-ւ-լ-ի-ն), *իցեն* (-ր ը-ւ-լ-ի-ն), *էանց* (-ն-ց-ա-ւ), *համբերի* (հ-ա-մ-բ-ե-ր-ի), *ածէք* (բ-ե-ր-է-ք), *սիրեսցեն* (ն-ա-ղ -ի-ր-ե-ն), *մտանեմ* (կը մ-տ-ա-ն-ե-մ), *մոլիք* (դէպ-ի մ-ո-ն-է-ք), *ցնծա՛*, *ելանէի* (կ'-ե-լ-ն-է-ի), *եհաս* (հ-ա-ս-ա-ւ), *անցի* (-ն-ց-ա-յ), *անէծ* (-ն-է-ծ-է-ց), *մուծի* (մ-ո-ւ-ծ-ի), *պագիք* (դէպ-ի պ-ա-գ-ի-ք), *ստեղծ* (-ս-տ-ե-ղ-ծ-է-ց), *ցուցէք* (ց-ո-ւ-ց-է-ք), *հարի* (ջ-ր-ի-է), *խորհեցայ* (մ-ո-ր-հ-ե-ց-ի), *հայեաց* (-ի-է-ա-ց), *զործէի* (կը գ-ո-ր-ծ-է-ի), *արարին* (ը-ր-ի-ն), *արի՛* (ե-լ-է-ր), *յառնեմ* (կ'-ե-լ-ն-ի), *ըմբռնեցայ* (բ-ռ-ն-ե-ց-ա-յ), *զենում* (կը մ-ր-ն-ի), *կիզի* (-ս-ր-ե-ն-ի), *ա՛ռ*, *եռու* (գ-ո-ւ), *թաքիր* (գ-ա-ղ-ա-ր-ի), *փախիր*, *մի՛ գար*, *ե՛կ* (է-կ-ա-ր)։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց	*Թարգմանութիւն*
Աղուէս յանգէտս անկեալ 'ի ջրհոր մինչդեռ շուրջ փակեալ կայր 'ի բարձր ոլորտից, Նոխազ ծարաւահիւծ դիմեալ 'ի նոյն վայր՝ եհարց թէ քաղցր էր ջուրն և էր	Աղուէսն առանց գիտնալու ջրհոր մ'իյնալով երբ բարձր բոլորտիքով փակուած էր, սաստիկ ծարուած Նոխազ մը (-ր-ա -ն-ի) նոյն տեղը գալով հարցուց թէ

յորդառատ։ Իսկ նա դաւանս նիւթելով ասէ. «Բարեկամ, էջ այսր, քաղցրութիւն ջրոյս այնքան է զի ոչ յագիմ ըմպելով»։ Եւ իբրև էջ Ալեւորն, Աղուէս ընդ բարձր եղջիւրս նորա ընդոստուցեալ 'ի վեր վազեաց 'ի գրոյ անտի և եթող զԵոխազ խրեալ 'ի շրջափակ ճահճի անդ։

— Այր խորամանկ եթէ անկանի 'ի վտանգ՝ հնարի խուսափել անտի այլոյ վնասուն։

ջուրն անուշ և առատ էր։ Իսկ Աղուէսը խաբէութեամբ ասաւ. «Բարեկամ, վար իջիր, այս ջրոյս անուշութիւնն այնչափ է որ խըմելով չեմ յագենար»։ Եւ երբ մօրուքաւորը վար իջաւ, Աղուէսն անոր բարձր եղջիւրներէն ցատկելով դէպ 'ի վեր ելաւ և Եոխազը չորս կողմը փակուած ճահճին մէջ թողուց։

— Խորամանկ մարդը եթէ վտանգի մէջ իյնայ՝ ուրիշին վնասովն անկէ փախչելու ճար կը հնարէ։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Եղանակ և Ժամանակ

104. **Եղանակ կ'ըսուին բայերուն մէջ ըլլալու և ընելու կերպերն, և երեք հատ են.** Սահմանական, Հրամայական, Ստորադասական։

105. **Ժամանակ ըսելով բայից մէջ կ'իմացուի բան մ'ըլլալու և ընելու առեն, և երեք է** Ներկայ, Անցեալ, Ապառնի։

106. **Ներկայ կ'ըսուի երբ հիմա կատարուի գործն. Անցեալ կ'ըսուի՝ երբ առաջ կատարուած է. Ապառնի՝ երբ դեռ նոր պիտի կատարուի։ Օրինակ. Կը գրեմ** (ներկայ), **գրեցի** (անցեալ), **պիտի գրեմ** (ապառնի)։

107. **Անցեալը երկու տեսակ է.** Անկատար և Կատարեալ։ **Անկատար անցեալը կ'իմացընէ թէ բան մը եղեր է՝ բայց բոլորովին լմընցած չէ. Կատարեալ անցեալը կ'իմացընէ թէ բոլորովին անցած գացած է։ Օրինակ. — Անկատար. Սիրէի** (կը սիրէի), **գրէաք** (կը գրէիք), **հաւատայիք** (կը հաւատայիք). — **Կատարեալ. Սիրեցի** (սիրեցի), **գրեցաք** (գրեցիք), **հաւատացիք** (հաւատացիք) **են։**

Ծանօթ. — Գրաբարի մէջ բայից առջև կը և պիտի մասնիկները չեն բաներ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 104. *Ի՞նչ է* ԵՂԱՆԱԿ *և քանի՞։* — 105. ԺԱՄԱՆԱԿ *ըսելով ի՞նչ կ'իմացուի և քանի՞ է* — 106. *Ժամանակն երբ* ՆԵՐԿԱՅ, *երբ* ԱՆՑԵԱԼ *և երբ* ԱՊԱՌՆԻ *կ'ըսուի* — 107. ԱՆՑԵԱԼԸ *քանի՞ տեսակ է և ի՞նչ կ'իմացընեն այս տեսակները։*

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Որոշել ու նշանակել հետեւեալ բայերուն ժամանակները։

Իմացայ, ելլ (էլլէր), ծանիր (ծանիր), սիրեցէք, մի դատիք (մի դատէք), խօսեաց (խօսէ), լուիցէ (լսէ), ծածկեսցի (ծածկէ), գործէ (կը գործէ), ամայցեմ (որ վրէժ), առից (առնէ), արասցուք (ընենք), նայեցան, մի լռեր, զգա, տեղացի (վազցնէ), խաղաց, բնակեսջիք (բնակիք), մոռա (մոռնար), մնացէք, տակայի (կը դիմանայի), լուացաւ (լուացուեցաւ), կեցցեմք (որ ապրինք), ամասջիր (վրէժ), կեայք (կ'ապրիք), յագենամ (կը կշտանամ), գարձիր, փութա, աղաչեցի, կարեա (կրէ), հրամայիցեմ (որ հրամայեմ), կանգնէի (կը գոնէի), ամաչեա (ամչնար), մանչեցիս (նէ մանչեմ), դիմեա (դիմէ), օձի (օձէն), հան (հանէ), փախիցուք (փախչինք), անո (հոգ), կորուսի (կորսնցուցի), ծնանէի (կը ծնէի), ընթացայ (վազեցի), էր, եղանիջիր (էջիր), առէք, եղէք։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցամ

Ա. — Ե. Ուղղ.

Եկաց Ագռաւ գժպհի յուս ոչխարի։

Նա ընդ երկար ակամայ զբեռնն բերեալ՝ ապա ասէ. Եթէ զայդ չարաժանուոյ չան առնէիր, թերեւս տայիր զբ-ւրէժ չարեացդ։

Ա. որ չարաչուէրն յաւել. Արհամարհեմ զակարս և տեղի տամ 'ի հզօրաց. քանզի գիտեմ զո՛ խուել և ո՞ւմ շնթել փաղաքուշ։

Այս պէս ձգեմ զծերութիւն յամերամ։

Թարգմանութիւն

Ա. — Ն. Ուղղ.

Անպիտան Ագռաւն Ոչխարին ուսին վրայ կեցաւ։ Նա երկայն ատեն չուզելով այն բեռը տանելէն ետքը՝ ըսաւ. Եթէ այդ բանը պատրաստող չան մ'ընէիր՝ գուցէ չարեացդ պատիժը կ'առնուիր։ Որուն պատասխանեց անպգամը. Տկարները կ'արհամարհեմ և զօրաւորներէն հեռու կը կենամ. ադէկ գիտեմ թէ զո՞վ պէտք է տանջել և որո՞ւն քաղաքելով շողոքորթութիւն ընել։ Այս կերպով իմ ծերութեանս տարիները կ'երկրնցընեմ։

ՓՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Էական բայի յոգնակիները

108. Էական *կ'բառնի* եմ *բայն որ ըլլալ կամ կենալ կը նշանակէ։*

109. Եմ էական բայն հետևեալ կերպով կը խոնարհի։

Սահմանական Եղանակ

Ներկայ			*Անկատար*	
ԵՆ.	Եմ	Ես եմ	Էի	Ես էի
	Ես	Դուն ես	Էիր	Դուն էիր
	Է	Ան է	Էր	Ան էր
ՅՈՒՅ.	Եմք	Մենք ենք	Էինք	Մենք էինք
	Էք	Դուք էք	Էիք	Դուք էիք
	Են	Անոնք են	Էին	Անոնք էին

Կատարեալ (յունի)			*Ապառնի* (յունի)	
Հրամայական Եղանակ			Ստորադասական Եղանակ	
			Իցեմ	Որ ըլլամ
ԵՆ.	Եր	Եղէր	Իցես	ըլլաս
			Իցէ	ըլլայ
ՅՈՒՅ.	Էք, երուք	Եղէք	Իցեմք	ըլլանք
			Իցէք	ըլլաք
			Իցեն	ըլլան

Անորոշ դերբայ Եւ ըլալ

Անցեալ դերբայ Եալ եղած, ըլալով

Ապառնի դերբայ Ելոց ըլալու, որ պիտի ըլլայ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 108. ԷԱԿԱՆ բայը ո՞րն է — 109. Խոնարհէ ԵՄ էական բայն։

Ծանօթ. – Եմ բային Կատարեալ ու Ապառնի ժամանակներն Եղանիմ բայէն կը լրանան, այսպէս. Կար. Եղէ, եղեր, եղև (եղայ, եղար, եղաւ) եղաք, եղէք, եղեն (եղանք, եղաք, եղան). Ապառն. Եղէց, եղիցիս, եղիցի (պիտի ըլլամ, պիտի ըլլաս, պիտի ըլլայ)։ Հրամայականն ալ՝ Լինիմ բայէն կը լրանայ այսպէս. Լեր կամ Լիջիր (եղիր) մի լինիր (մ'ըլլար) լերուք (եղէք) մի՛ լինիք (մ'ըլլաք)։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հետեւեալ խառն լծորդուած Էական բայից պատշաճ դէմքի դերանուն դնել, եւ թիւն ու ժամանակն որոշել եւ թարգմանել։

Են, էիք, եղաք, եղիցի, իցես, եմք, եղեն, էաք, լեր, եղիցին, էր, ես, եղէց, էի, եղիջիք, եղէ, էք, մի լինիր, եղեր, է, իցեմք, լերուք։

Բ. Հետեւեալ խօսքերուն մէջ փակագծով դրուած Էական բայերը գրաբառ դարձնել։

Մանկունք, փութացէք (եղէք). Դու ստախօս (մ'ըլլար). Հայր իմ մեծատուն (է). Ես (պիտի ըլլամ) հնազանդ. Տէր (եղաւ) ինձ օգնական. Թշնամիք յամօթ (պիտի ըլլան). Մեք և դուք բարեկամք (էինք). Իշխանքն ապստամբ (եղան). Որդեակ, անյիշաչար (եղիր). Դու (պիտի ըլլաս) մեծ ոմն. Ոչ (պիտի ըլլաս) զայրացող ընկերի քում՝ եթէ (որ ըլլաս) առաքինի. Միտք մեր (պիտի ըլլան) լցեալք խնամատութեամբ, եթէ (որ ըլլանք) ցանկացող զեղոյ նորա։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց	*Թարգմանութիւն*
Ե՛՝վդ Ի՛ էշ ի՛՝ր	Ե՛՝վդ Ի՛ ի՛՝ր էշը
Երբեմն Եսովպ հեծեալ յիշակ իւր դէմ եղեալ գնայր	Առենք Եսովպ իր իշուկն հեծած երբ այգես-

յայգեստան, էշն 'ի յուղ-
ուջ յամառեալ զկայ էառ.
և վերելակն քանիցս մտրակ
'ի կուշտ առնելով ձայնէր,
Տէ՛, հ-՛դ-, օ՛ն, ասելով՝ նա
յետս ընդդէմ ընթանայր։
Յայնմ վայրի հանդիպեալ
ծերոյն բարեկամաց ոմանց՝
հարցին եթէ յո՛ երթաս։
Պատասխանի ետ ծերունին
և ասէ. Ես յայգեստան, էշն
'ի տուն։

— Այսու յայտ արար՝ զի
'ի խեռել հպատակաց՝ չկա-
րեն ինչ կամք իշխանին։

տան կ'երթար, ճամբուն
վրայ իշուն յամառութիւնը
բռնելով կեցաւ. և վրայի
նստողն որչափ մտրակովը
զարնելով Տէ՛, հ-՛դ-, օ՛ն կ'ը-
սէր էշը դէպ 'ի ետև կ'եր-
թար։ Նոյն տեղը քանի մը
բարեկամներ հանդիպելով
ծերոյն հարցուցին թէ ուր
կ'երթաս։ Ծերունին պա-
տասխանեց. Ես այգին, է-
շը տուն։

— Այս խօսքով յայտնեց
թէ երբոր հպատակները կ'ա-
պըստամբին՝ իշխանին կամ-
քը բանի չի դար։

ԳԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Բայերու երեք յոտոդութիւնն ու տեսակները

110. Գրաբարի մէջ բայերուն երեք յոտոդութեան կերպ կայ։ Առաջին յոտոդութիւն, Երկրորդ յոտոդութիւն, Երրորդ յոտոդութիւն։

111. Առաջին յոտոդութեան կը վերաբերին ամ *վերջացող բայերն. ինչպէս Կարդամ, հաշուամ. Երկրորդ յոտոդութեան՝* եմ *վերջացող բայերը կը վերաբերին. ինչպէս. Սիրեմ, սերժեմ, գրեմ. Երրորդ յոտոդութեան՝* ում *վերջացող բայերը կը վերաբերին. ինչպէս. Ջնջում (մոռթեմ), արգելում (արգիլեմ)։*

112. Ամէն բայերն իրենց նշանակութեան համեմատ երեք տեսակ կը բաժնուին. Ներգործական *բայեր*, Կրաւորական *բայեր և* Չէզոք *բայեր։*

113. Ներգործական է բայն՝ եթէ անձի կամ իրի մը վրայ ուղղակի ազդել նշանակէ։ Օրինակ. Սիրեմ, գրեմ, կարդամ ներգործական բայեր են, վասնզի ուրիշ անձի կամ իրի վրայ կը գործեն, որով կ'ըսենք սիրեմ զեղեցիկ իմ, *գրեմ* զայս թուղթ, *կարդամ* զանունդ, *են։*

114. Եթէ բայն ուրիշէն կրել կամ ազդեցութիւն ընդունել նշանակէ՝ Կրաւորական կ'ըսուի։ Օրինակ. Դու գովիս (կը գովուիս) 'ի վարժապետաց, սա պատուհասի (կը պատժուի)։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 110. *Բայերը քանի՞ յոտոդութիւն ունին* – 111. *Ի՞նչ վերջաւորութեամբ բայեր առաջին յոտոդութեան կը վերաբերին. երկրորդին. երրորդին* – 112. *Բայերն իրենց նշանակութեան համեմատ քանի՞ տեսակ կը բաժնուին* – 113. *Ո՞ր տեսակ բայը* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ *կ'ըսուի* – 114. *Ո՞ր տեսակ բայը* ԿՐԱՒՈՐԱԿԱՆ *կ'ըսուի։*

115. Զէզոք կ'ըսուին այն բայերն որ ընել կը նշանակեն առանց ուրիշին վրայ ազդելու։ Օրինակ. կեռամ (ապրիմ), մեռանիմ (մեռնիմ), ննջեմ (քնանամ), զարթնուում (արթննամ)։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Որոշել հետեւեալ բայից տեսակն ու ո՛ր լծորդութեան վերաբերին։

Անամ (հիկ ընիմ), ազդեմ, ելանեմ, ընթեռնում, համարիմ, սիրեմ, գործեմ, պչնում (ն-ոյիմ), արգելում, բանամ, ազամ, ատիպեմ, մնամ, կամ, դրդեմ, ընկենում, հրամայեմ, խնդամ, հնչեմ, զարթնում, բարկանամ, մերկանամ, ծուլանամ, թաքնում (պ-հ-ըրիմ), յենում (կ-ընիմ)։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց	*Թարգմանութիւն*
Խ-ղ-խ-ուր Ի Մ-ր-ն-է-ր-թ	Կ-ա-ի մ-ա-ր-ող -- Կ-ա-ի-է-ր-թ-ը
Խաղախուրդ ոմն հանդիպեալ մորթեգործի նախատելով ժահահոտ կոչէր զնա։ Իսկ նա ասէ. Մատադիւր համբերէի եթէ 'ի քաղցրահոտ իւղեփեցաց զիս նախատէր։ Այլ զի՞ դու մեղադրել չամաչես որ առաւել քան զիս նեխահոտ ես։	Կաշի մաքրող մը կաշեգործի մը հանդիպելով, զանիկայ նախատելով հոտած կը կանչէր։ Բայց նա ըսաւ. Սիրով կը համբերէի՝ եթէ անոյշ իւղեր եփողներէն մէկը զիս նախատէր։ Բայց դուն ինչպէս չես ամչնար զիս մեղադրել՝ որ ինծմէ աւելի գարշահոտ ես։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 115. *Զէզոք ո՛ր տեսակ բայերը կ'ըսուին։*

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Առաջին լծորդութիւն ներգործական

116. Հաշատամ բայն այսպէս կը լծորդուի.

Սահմանական եղանակ

	Ներկայ		*Անկատար*	
Եզ.	Հաւատամ	կը հաւատամ	Հաւատայի	կը հաւատայի
	Հաւատաս	կը հաւատաս	Հաւատայիր	կը հաւատայիր
	Հաւատայ	կը հաւատայ	Հաւատայր	կը հաւատար
Յոգ.	Հաւատամք	կը հաւատամք	Հաւատայաք	կը հաւատայինք
	Հաւատայք	կը հաւատաք	Հաւատայիք	կը հաւատայիք
	Հաւատան	կը հաւատան	Հաւատային	կը հաւատային

	Կատարեալ		*Ապառնի*	
Եզ.	Հաւատացի	հաւատացի	Հաւատացից	պիտի հաւատամ
	Հաւատացեր	հաւատացիր	Հաւատացես	հաւատաս
	Հաւատաց	հաւատաց	Հաւատացէ	հաւատայ
Յոգ.	Հաւատացաք	հաւատացինք	Հաւատացուք	հաւատանք
	Հաւատացիք	հաւատացիք	Հաւատացջիք	հաւատաք
	Հաւատացին	հաւատացին	Հաւատացեն	հաւատան

	Հրամայական եղանակ		Ստորադասական եղանակ	
Եզ.	Հաւատա	հաւատա	Հաւատացցեմ	պիտի հաւատամ
	Հաւատացջիր	հաւատա	Հաւատացցես	հաւատաս
Յոգ.	Հաւատացէք	հաւատացէք	Հաւատացցէ	հաւատայ
	Արգելական		Հաւատացցեմք	հաւատանք
Եզ.	Մի հաւատար	մի հաւատար	Հաւատացցէք	հաւատաք
Յոգ.	Մի հաւատայք	մի հաւատաք	Հաւատացցեն	հաւատան

Անորոշ դերբայ Հաւատալ հաւատալ

Անցեալ դերբայ Հաւատացեալ հաւատալով

Ապառնի դերբայ Հաւատալոց հաւատալու, որ պիտի հաւատայ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 116. Լծորդէ ՀԱԽԱՏԱՄ բայն:

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հաւատամ բային պէս լծորդել հետեւեալներն։

Աղամ, զգամ, խոկամ, կարդամ, մուրամ, ողբամ, տեղամ, լուանամ, մերկանամ, լամ, բանամ, անեամ, գնամ, ճեամ, տոկամ, եռամ, խաղամ, խնդամ։

Բ. Որոշել հետեւեալ Ա. լծորդութեան բայից ժամանակն, եղանակն ու նշանակութիւնն։

Զգացի, խօսեաց, մի բանար, անեացէք (հրկ ընել), եռան, խնդայք, լային, մուրաց, ճեա, կաց, աղայ, զգացից, կարդասջիք, ողբայցեմ, ամացից (վերել), մի լայք, ելաց, եռալ, խաղան, զեռային (վերել), եկաց, կաց, բարձի (վերցնել), ողբային, կարդացէք, խնդացեր, լացիք, ամացէք, խոկացեր, զգացին, բանայցեմ, բացցես, կացջիք (կենալ), կայցեն, կացեր, աղա։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Եւ Ի դրոյն

Ոմն 'ի դրացեաց հայցեալ 'ի ծերոյն զէշն 'ի փոխ ասէ. « Գրաստն չէ 'ի տան. տայի քեզ մուագիւր՝ եթէ չէի վաղքաջ յղեալ զնա յաղօրիս »։ Այն ինչ նա զայս ասէր՝ յանկարծակի խանչիւն իշոյ լսելի եղեւ 'ի գոմոյն։ Ասէ դրացին. « Այլ ահա գրաստն խանչէ 'ի գոմի »։ Յայնժամ ասէ ծերն. « Ուրեմն առաւել գրաստուն հաւատաս քան ինձ »։

— Եւ ով եցոյց առակաւս հաւատարիմ լինել զանբան քան զայր ստախօս։

Թարգմանութիւն

Եւ Ի դրոյն

Դրացիներէն մէկը ծերուն էշը փոխ ուզելով, « Տունը չէ, ըսաւ. առաւօտանց աղօրիք ղրկեցի, եթէ ղրկած չըլլայի՝ սիրով կուտայի »։ Հազիւ թէ այս խօսքն ըսաւ, յանկարծակի գոմէն իշուն զռալու ձայնը լսուեցաւ։ Դրացին ըսաւ. « Ահա էշն ախոռը կը զբռայ »։ Այն ատեն ծերուն ըսաւ. « Ուրեմն իշուն ինձմէ աւելի կը հաւատաս »։

— Եւ ով այս առակով ցցուց թէ անբանն աւելի հաւատարիմ է քան ստախօս մարդը։

ՓՈԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Երկրորդ յոտդոհթիւն ներգործական

117. Կատարեմ բայն այսպէս կը խոնարհի.

Սահմանական եղանակ

	Ներկայ		Անկատար	
Եզ.	Կատարեմ	կը լմընցընեմ	Կատարէի	կը լմընցընէի
	Կատարես	կը լմընցընես	Կատարէիր	կը լմընցընէիր
	Կատարէ	կը լմընցընէ	Կատարէր	կը լմընցընէր
Յն.	Կատարենք	կը լմընցընենք	Կատարէաք	կը լմընցընէինք
	Կատարէք	կը լմընցընէք	Կատարէիք	կը լմընցընէիք
	Կատարեն	կը լմընցընեն	Կատարէին	կը լմընցընէին

	Կատարեալ		Ապառնի	
Եզ.	Կատարեցի	լմընցուցի	Կատարեցիս	պիտի լմընցընեմ
	Կատարեցեր	լմընցուցիր	Կատարեացես	լմընցընես
	Կատարեաց	լմընցուց	Կատարեացէ	լմընցընէ
Յն.	Կատարեցաք	լմընցուցինք	Կատարեացուք	լմընցընենք
	Կատարեցիք	լմընցուցիք	Կատարեաջիք	լմընցընէք
	Կատարեցին	լմընցուցին	Կատարեացեն	լմընցընեն

Հրամայական եղանակ

Եզ.	Կատարեա	լմընցուր
	Կատարեաջիր	լմընցուր, լմընցընես
Յն.	Կատարեցէք	լմընցուցէք

Արգիլական

Եզ.	Մի կատարեր	մի լմընցներ
Յն.	Մի կատարէք	մի լմընցնէք

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 117. Խոնարհէ ԿԱՏԱՐԵՄ բայը։

Ստորադասական եղանակ

Եզ.	Կատարիցեմ որ	լմընցընեմ	պիտի	լմընցընեմ
	Կատարիցես	լմընցընես		լմընցընես
	Կատարիցէ	լմընցընէ		լմընցընէ
Յ-ք.	Կատարիցեմք	լմընցընենք		լմընցընենք
	Կատարիցէք	լմընցընէք		լմընցընէք
	Կատարիցեն	լմընցընեն		լմընցընեն

Անորոշ դերբայ Կատարել լմընցընել

Անցեալ դերբայ Կատարեալ լմընցած, լմընցընելով

Ապառնի դերբայ Կատարելոյ, կատարելու, որ պիտի կատարուի։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Կատարեմ բային պէս լծորդել հետեւեալներն։

Սիրեմ, աղաչեմ, այրեմ, գրեմ, կոչեմ, հնչեմ, շարժեմ, շինեմ, դարմանեմ, կործանեմ, վանեմ, յայտնեմ, ասեմ, աղաղակեմ, կարեմ, տիրեմ։

Բ. Որոշել հետեւեալ ·Յ լծորդութեան բայից ժամանակն, եղանակն ու նշանակութիւնը։

Գործեա, այրիցեմ, գրեսցուք, հնչէի, շարժեցի, դարմանեցէք, վանեցիք, վանիցեմ, աղաչէի, շինեսջիր, մի կանչէք, սիրեսջիք, կործանեցից, կարացի (կ-ր-ն-ել), յայտնեա, ըմբռնեմ, հրամայեցի, խափանեա, գոչեա, ամաչեցէք, կոչեցաք, կոչեցին, յանդիմանեցից, թուեսջիր (հ-ր-ել)։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցած	*Թարգմանութիւն*
Ն-ր-է-տ-ի Ա ԺՂԷՀ	Ն-ր-է-տ-ի Ա ԼԷԲ ՀՐԴ ՀԷ
Ի զգնալն երբեմն Նասրէտտինայ ընդ հրապարակ քաղաքին, ոմն յամբոխէն	*Երբեմն Նասրէտտինքաղաքին հրապարակը քալելու ատեն՝ ժողովրդեան մէջ*

ժանտ և ժպիրհ եհան նմա ապտակ ուժգին։ Հասին զի-նուորք կալան զյանցաւորն և ածին յատեան. զհետ նո-ցին չոգաւ և ինքն իսկ Ծե-բունին դատախազ։ Արդ օրէնսգէտք առեալ 'ի վայր զմատեանս տային վճիռ՝ թէ պարտաւորն հատուցէ պարտատեառն երիս դահե-կանս։ Յայնժամ Ծերունին տեսեալ զպատիւ անձին այն-քան անարգ գնոց վաճա-ռեալ, ած ապտակ միւսմ 'ի նոցանէ և 'ի բաց ել՝ ա-սելով. « Զպահանջն իմ քեզ թողում »։

— Զիք ինչ զուգակշիռ պատուոյ 'ի մարդիկ. և որ զանձուց վաճառէ զայն՝ զան-ձն ընդ վայր հարկանէ։

ջէն չար և լիրբ մարդուն մէկը ուժով ապտակ մը զար-կաւ իրեն։ Զինուորները հասան, բռնեցին յանցա-ւորն ու դատաստանի տա-րին. Ծերունին ալ իրրև դա-տախազ հետերնին գնաց։ Հոն օրէնք գիտցողները գիրքերնին վար բերելով վճիռ տուին թէ պարտա-ւորը պարտատիրոջ երեք դահեկան հատուցանէ։ Ծե-բունին տեսնելով որ իւր անձին պատիւն այնչափ ցած գնով ծախեցին, անոնցմէ մէկուն ապտակ մը զարկաւ և դուրս ելաւ ըսելով. « Իմ առնելիքս քեզի կը թո-ղում »։

— Մարդկանց մէջ պա-տուոյ հաւասար արժէք ու-նեցող բան չկայ. և ով որ զայն գանձերու հետ կը փո-խանակէ՝ իր անձը բանի տեղ չի դներ։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Երրորդ յոգնութիւն ներգործական

118. Արգելում բայն այսպէս կը խոնարհի.

Սահմանական եղանակ

	Ներկայ		*Անկատար*	
Եզ.	Արգելում	*կ'արգիլեմ*	Արգելուի	*կ'արգիլէի*
	Արգելուս	*կ'արգիլես*	Արգելուիր	*կ'արգիլէիր*
	Արգելու	*կ'արգիլէ*	Արգելոյր	*կ'արգիլէր*
Յն.	Արգելումք	*կ'արգիլենք*	Արգելուաք	*կ'արգիլէինք*
	Արգելուք	*կ'արգիլէք*	Արգելուիք	*կ'արգիլէիք*
	Արգելուն	*կ'արգիլեն*	Արգելուին	*կ'արգիլէին*

	Կատարեալ		*Ապառնի*	
Եզ.	Արգելի	*արգիլեցի*	Արգելից	*պիտի արգիլեմ*
	Արգելեր	*արգիլեցիր*	Արգելցես	*արգիլես*
	Արգել	*արգիլեց*	Արգելցէ	*արգիլէ*
Յն.	Արգելաք	*արգիլեցինք*	Արգելցուք	*արգիլենք*
	Արգելէք կամ լիք	*արգիլեցէք*	Արգելջիք	*արգիլէք*
	Արգելին	*արգիլեցին*	Արգելցեն	*արգիլեն*

Հրամայական եղանակ

Եզ.	Արգել կամ Արգելջիր	*արգիլէ*
Յն.	Արգելէք	*արգիլեցէք*

Արգելական

Եզ.	Մի արգելուր	*մի արգիլեր*
Յն.	Մի արգելուք	*մի արգիլէք*

Ստորադասական եղանակ

Եզ.	Արգելուցում որ	*արգիլեմ կամ պիտի*	*արգիլեմ*
	Արգելուցուս	*արգիլես*	*արգիլես*
	Արգելուցու	*արգիլէ*	*արգիլէ*
Յն.	Արգելուցումք	*արգիլենք*	*արգիլենք*
	Արգելուցուք	*արգիլէք*	*արգիլէք*
	Արգելուցուն	*արգիլեն*	*արգիլեն*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 118. *Խոնարհէ* ԱՐԳԵԼՈՒՄ *բայը:*

Անորոշ դերբայ Արգելու արգիլել
Անցեալ դերբայ Արգելեալ արգիլած, արգիլելով
Ապառնի դերբայ Արգելոց արգիլելու, որ պիտի արգիլե։

ՀՐԱՀԱՆԳ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Արգելում բային պէս խոնարհել հետեւեալներն։

Գելում (կոդնեցնել), զենում (հրմնել), առնում (առնել), հեղում (ռոփել), լնում (լիցնել), կիզում (այրել), հերձում (պատռել), թողում, ընկենում (նֆել)։

Բ. Որոշել հետեւեալ գ. լծորդութեան բայից ժամանակն, եղանակը, թիւն ու նշանակութիւնը։

Գելու, առի, եզեն, հեղից, լից, մի կիզուր, յաւելի, ընկենուցում, խցի (ռիթել), ելից, թողաք, հեղուաք, թողուն, առ, լցէք, յաւելից, զեն, եհեղ, կիզէք, հերձուն, առնուք, հեղեալ, թողլոց։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուած	Թարգմանութիւն
Ա. Եղեր	Հ. Նել.
Առանց քայլելոյ	Առանց քալելու
Ընթացաւ ընդ ծով,	Ծովուն մէջ վազեց,
Եւ չունէր նաւակ.	Եւ նաւակ չունէր.
Անողոզ 'ի ջրոյ	Առանց թրջուելու
Թաղեցաւ ընդ ջրով	Ջրին տակ թաղուեցաւ
Ի ծովուն յատակ։	Ծովուն յատակը։
Ջուրկ էր նա յօդոյ.	Նա օդէն զուրկ էր.
Մեռեալ ոչ զոլով	Եւ մեռած չըլլալով
Եւ չընչէր յըստակ։	Ցատակ կը չընչէր։
Ո՞վ իցէ այս մարդ,	Ո՞վ է այս մարդը
Աստ դու ինձ արդ,	Հիմա դու ինձ ըսէ.
Եւ առասպելիս	Եւ այս իմ առակիս
Իմ գիտակ լինիս։	Գիտցող կ'ըլլաս։

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Ա. Լծորդութեան կրաւորական ձևեր

119. Երեք լծորդութեանց վերաբերող ներգործական բայք ունին նաև իրենց կրաւորական ձևերն։ Օրինակ. Հաւատացի. կը. հաւատացայ (հաւատացուեցայ). Սիրեմ. կը. սիրիմ (կը սիրուիմ). Արգելի. կը. արգելայ (արգիլուեցայ), են։

120. Բայի մը կրաւորական ձևը ներգործականէն կը տարբերի գլխաւորապէս կատարեալին, Ապառնիին, Հրամայականին և Ստորադասականին մէջ։

121. Բայերուն ներգործական ձևերուն կատարեալն ի կը վերջանայ և կրաւորականներուն՝ այ։ Օրինակ. Ներգ. Գրեց–ի կը. Գրեց–այ (գրուեցայ). – Ներգ. Կոչեց–ի. կը. Կոչեց–այ (կանչուեցայ). – Ներգ. Հաւատաց–ի. կը. Հաւատաց–այ. – Ներգ. Արգել–ի. կը. Արգել–այ, են։

122. Հաւատամ բային կրաւորական ձևն այսպէս կը խոնարհի.

Սահմանական եղանակ

Ներկայ

	Եզ.		Յոգ.
Հաւատամ	կը հաւատացուիմ	Հաւատամք	կը հաւատացուինք
Հաւատաս	կը հաւատացուիս	Հաւատայք	կը հաւատացուիք
Հաւատայ	կը հաւատացուի	Հաւատան	կը հաւատացուին

ՀԱՐՑՄՈՒՆՔ. – 119. Երեք լծորդութեան ներգ. բայք ուրիշ ձև ալ ունին – 120. Ո՞ր գլխաւոր ժամանակներուն մէջ բայի մը կրաւորական ձևը ներգործականէն կը տարբերի – 121 Ի՞նչ կը վերջանայ բայից ներգործական ձևի կատարեալն և ի՞նչ կը վերջանայ կրաւորական ձևի կատարեալն – 122. Խոնարհէ ՀԱՒԱՏԱՄ բային կրաւորական ձևն։

Ներկայաբար

	Եզ.		Յ-ոգ.
Հաւատայի	կը հաւատացուէի	Հաւատայաք	կը հաւատացուէինք
Հաւատայիր	կը հաւատացուէիր	Հաւատայիք	կը հաւատացուէիք
Հաւատայր	կը հաւատացուէր	Հաւատային	կը հաւատացուէին

Կատարեալ

Եզ.	Հաւատացայ	հաւատացուեցայ
	Հաւատացար	հաւատացուեցար
	Հաւատացաւ	հաւատացուեցաւ
Յ-ոգ.	Հաւատացաք	հաւատացուեցանք
	Հաւատացայք	հաւատացուեցայք
	Հաւատացան	հաւատացուեցան

Ապառնի

Եզ.	Հաւատացայց	պիտի հաւատացուիմ
	Հաւատայիս	հաւատացուիս
	Հաւատայի	հաւատացուի
Յ-ոգ.	Հաւատացուք	հաւատացուինք
	Հաւատայիք	հաւատացուիք
	Հաւատայցին	հաւատացուին

Հրամայական եղանակ

Եզ.	Հաւատայիր	կամ	Հաւատայիր	հաւատացուէ
Յ-ոգ.	Հաւատացարուք		Հաւատայցէք	հաւատացուեցէք

Արգելական

Եզ.	Մի հաւատար	մի հաւատացուիր
Յ-ոգ.	Մի հաւատայք	մի հաւատացուիք

Ստորադասական եղանակ

Եզ.	Հաւատայցիմ	որ հաւատացուիմ
	Հաւատայցիս	հաւատացուիս
	Հաւատայցի	հաւատացուի
Յ-ոգ.	Հաւատայցիմք	հաւատացուինք
	Հաւատայցիք	հաւատացուիք
	Հաւատայցին	հաւատացուին

Անորոշ դերբայ Հաւատալ հաւատացուիլ

Անցեալ դերբայ Հաւատացեալ հաւատացուած հաւատացուելով

Ապառնի դերբայ Հաւատալոց հաւատացուելու, որ պիտի հաւատացուի։

ՀՐԱՀԱՆԳ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

Ա. Հաւատամ բային կրաւորական ձեւին պէս խոնարհել հետեւեալներն։

Համբանամ, աղամ, զգամ, կարդամ, խմանամ, բանամ, թանամ, մոռանամ։

Բ. Հետեւեալ բայից ներգործականները կրաւորական դարձնել եւ կրաւորականները՝ ներգործական։

Ամցի, կարդացայ, զգացից, մուրացայց, ողբացի, աղացիր, խմացէք, լացայ, թացից, բարձէք, դողացի, բացայ, զղջացեր, հոգացայ, կարդայցիմ, խոկացաւ, լուացան, խմացիր, ժամանեցայ, որսացեր, հոգացին։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ

Հատուցաց

Եւ Մ-ԵՆ-ԷՆ

Մատենագրի ուրուն 'ի լուր Եսովպայ
Զիւրն ընթերցեալ շարագրած՝
Յորում անճահրս վեր 'ի վայր անապարծէր,
Եւ զծերունւոյն հետազօտեալ ըզկարծիս,
Թերևս, ասէ, քեզ պարծենալ թըւիցիմ,
Այլ ոչ 'ի զուր ինչ վրատահել գայ մեզ ընդ մերս հանճար։
Իսկ ծերունին տաղտկացեալ ընդ անչընորհն մատեան,
Բարւոք, ասէ, դու անձամբ զանձն գովես,
Զի չէ իսկ մարթ քեզ գովութեան յուսալ յայլմէ ումեքէ։
— Ասակս այս խրատէ զանապարծ մատենագիրս։

Թարգմանութիւն

ԵՂՈՎՊՈՍ Ի ՀԵՂԻՆԱԿ ՄԸ

Հեղինակ մը Եղովբոսին առջև
Իր գրուածքը կարդալով՝

Որուն մէջ անշնորհք կերպով վերէն 'ի վար ինքզինքը կ.
Եւ ծերոյն կարծիքը պրպտելով՝ (գովէր
Թերևս կը կարծես որ, բաւ, պարծենկոտութիւն կ'ընեմ
Սակայն մեր հանճարոյն վրայ զուր տեղ չենք վստահանար
Իսկ ծերը ձանձրանալով այն անշնորհք գրքէն,
Դու ինքզինքդ աղէկ որ կը գովես, բաւ,
Վասն զի ուրիշէ մը գովեստ յուսալ քեզի համար կարելի չէ
— Այս առակս պարծենկոտ հեղինակները կը խրատէ։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ